ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ 2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ

ԳՅՈՒՄՐԻ

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն.....3
2. Կենտրոնի ամենամյա աշխատանքային ծրագրի կատարողական 4
3. Կենտրոնի ընթացիկ գործունեությունը.
   3.1. Հետբուհական մասնագիտական կրթական ծրագրի համակարգումը 2022-2023 ուստարում.....31
   3.2. 2023թ.-ին Համալսարանի աշխատակիցների և ուսումնառողների կողմից հրատարակված աշխատությունների վերաբերյալ տվյալների վերլուծություն.....35
   3.3. Համալսարանի աշխատակիցներին գիտահետազոտական գործունեության համար 2023թ.-ին տրամադրված լրավճար.....60
   3.4. 2023թ.-ին ֆինանսավորված գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրեր.....62
   3.5. ՇՊՀ Գիտական տեղեկագիր.....70
   3.6. Ուսումնամեթոդական, ուսումնագիտական, գիտամեթոդական աշխատանքների, մենագրությունների, ատենախոսական աշխատանքների գրախոսման գործընթացի կազմակերպումը Կենտրոնի կողմից.....78
   3.7. Համալսարանի աշխատակիցների անցած վերապատրաստումներ.....82
   3.8. Համալսարանում 2022-2023 ուստարում իրականացված գիտական սեմինարներ.....86

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) 2022-2023 ուստարվա (որոշ դեպքերում 2023թ.-ի), գործունեության հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն) կազմված է 3 բաժիններից.

1. Ներածություն,
2. Կենտրոնի ամենամյա աշխատանքային ծրագրի կատարողականը,
3. Կենտրոնի ընթացիկ գործունեությունը.
   - 3.1. Հետբուհական մասնագիտական կրթական ծրագրի համակարգումը 2022-2023 ուստարում,
   - 3.2. 2023թ.-ին Համալսարանի աշխատակիցների և ուսումնառողների կողմից հրատարակված աշխատությունների վերաբերյալ տվյալների վերլուծություն,
   - 3.3. Համալսարանի աշխատակիցներին գիտահետազոտական գործունեության համար 2023թ.-ին տրամադրված լրավճար,
   - 3.4. 2023թ.-ին ֆինանսավորված գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրեր,
   - 3.5. ՇՊՀ Գիտական տեղեկագիր,
   - 3.6. Ուսումնամեթոդական, ուսումնագիտական, գիտամեթոդական աշխատանքների, մենագրությունների, ատենախոսական աշխատանքների գրախոսման գործընթացի կազմակերպումը Կենտրոնի կողմից,
   - 3.7. Համալսարանի աշխատակիցների անցած վերապատրաստումներ,
   - 3.8. Համալսարանում 2022-2023 ուստարում իրականացված գիտական սեմինարներ:

2-րդ բաժնում ներկայացված է Կենտրոնի ամենամյա աշխատանքային ծրագրի կատարողականը՝ ըստ Կենտրոնի՝ 2023-2027թթ. հնգամյա/ամենամյա աշխատանքային ծրագրի, Համալսարանի՝ 2023-2027թթ. Զարգացման ռազմավարական ծրագրի, ինչպես նաև վերջինիցս բխող Թերությունների վերացման գործողությունների ծրագրի իրականացման ժամանակացույցի:

3-րդ բաժնում ներկայացված է Կենտրոնի գործառույթներով պայմանավորված այլ ընթացիկ գործընթացների իրականացման հաշվետվությունը: Համեմատական վերլուծություն իրականացնելու նպատակով Կենտրոնի գործառույթներով պայմանավորված այլ ընթացիկ գործընթացների ցուցանիշները հիմնականում ներկայացված են վերջին 3 կամ 5 տարիների համար:

2. ԿԵՆՏՐՈՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

Հաշվետու ժամանակահատվածում Կենտրոնի ամենամյա աշխատանքային ծրագրի կատարողականը՝ ըստ Կենտրոնի՝ 2023-2027թթ. հնգամյա/ամենամյա աշխատանքային ծրագրի, ներկայացված է Աղյուսակ 1.1-ում և 1.2-ում:

Աղյուսակ 1.1

Համալսարանի՝ 2023-2027թթ. Զարգացման ռազմավարական ծրագրի կատարողական

N	Խնդիրներ	Լուծումներ/գործողություններ		Լուծման/ գործողության իրականացման ժամանակա-հատվածը	Կատարողականի ցուցիչ
1 (2.1)	Հետազոտահենք կրթություն և բարձրորակ մարդկային ռեսուրսներ	1.1 (2.1.1)	ՇՊՀ-ի գիտահետազոտական առաջնահերթություն-ների մշակում:	I եռամսյակ 2023 - III եռամսյակ 2023 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակ	➢ Հստակեցված և ամրագրված գիտահետազո-տական առաջնահեր-թություններ:

Համալսարանում գիտահետազոտական գործունեությունը նպատակաուղղված է գիտության՝ որպես համալսարանի ռազմավարական գերակայություններից մեկի զարգացմանը: Այս տեսանկյունից կարևոր **քայլ էր առաջին անգամ Համալսարանում գիտահետազոտական գործունեության զարգացման քաղաքականության մշակումը և 03.11.2023թ.-ին Գիտական խորհրդի կողմից հաստատումը:** Նշված իրավական ակտում, Համալսարանի՝ 2023-2027թթ. Զարգացման ռազմավարական ծրագրին համահունչ, ձևակերպված է Համալսարանում գիտահետազոտական գործունեության զարգացման *հիմնական նպատակը,* այն է. բնական, հումանիտար և հասարակական գիտությունների տարբեր ուղղություններով հետազոտությունների իրականացման զարգացումը՝ միջազգայնացման, ուսումնառության հետ կապի ու գիտակրթական կառույցների հետ համագործակցության ընդլայնման ապահովմամբ: Վերոնշյալ փաստաթղթում ձևակերպված են նաև Համալսարանի գիտահետազոտական գործունեության զարգացման *հիմնական խնդիրները.*

- ✓ համալսարանում գիտահետազոտական գործունեության հիմնական ուղղությունների և առաջնահերթությունների սահմանումը, դրանց զարգացման խթանումը,

- ✓ կրթական բոլոր աստիճաններում ուսումնական և գիտահետազոտական գործընթացների ինտեգրումը, մասնավորապես, հանրակրթություն-բարձրագույն կրթություն – հետազոտություն – նորարարություն «քառակուսու» ձևավորումն ու հետագա զարգացումը,
- ✓ գիտամանկավարժական և ուսանողական համակազմերի շրջանում գիտահետազոտական գործունեություն իրականացնելու հմտությունների զարգացումը,
- ✓ գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերում գիտամանկավարժական և ուսանողական համակազմերի ներգրավվածության խթանումը,
- ✓ միջազգային բարձր վարկանիշավորմամբ գիտական ամսագրերում, միջազգային գիտաժողովների ժողովածուներում տպագրության խթանումը,
- ✓ հանրապետական և միջազգային գիտաժողովներին գիտամանկավարժական և ուսանողական համակազմերի մասնակցության խթանումը,
- ✓ ՀՀ և օտարերկրյա գիտակրթական կառույցների հետ գիտական համագործակցության ընդլայնումը,
- ✓ Լավագույնների խրախուսումը՝ վերջնարդյունքում ակնկալելով ունենալ լավագույնս մոտիվացված գիտահետազոտական գործունեություն ծավալող աշխատակից և/կամ ուսանող:

Համալսարանում գիտահետազոտական գործունեության զարգացման քաղաքականության մեջ ամրագրված 1-ին խնդրի հենքի վրա առաջին անգամ մշակվել և 03.11.2023թ.-ին Գիտական խորհրդի կողմից հաստատվել է Համալսարանում գիտահետազոտական գործունեության հիմնական ուղղությունների և առաջնահերթությունների սահմանման ու զարգացման հայեցակարգը՝ կազմված 5 բաժիններից՝ ընդհանուր դրույթներ, գիտահետազոտական գործունեության զարգացման հիմնական ուղղությունների և առաջնահերթությունների սահմանման նպատակն ու խնդիրները, գիտահետազոտական գործունեության զարգացման հիմնական ուղղությունների և առաջնահերթությունների սահմանման սկզբունքները, ըստ սահմանված առաջնահերթությունների գիտահետազոտական գործունեության զարգացումը խրախուսող մեխանիզմները և ակնկալվող արդյունքները, եզրափակիչ դրույթներ: *Համալսարանի գիտահետազոտական գործունեության զարգացման քաղաքականությունից բխող հիմնական ուղղությունների և առաջնահերթությունների սահմանման նպատակն է ամրագրված ուղղություններով համալսարանում գիտահետազոտական գործունեության առավել ուղենշային զարգացումը:* Ընդ որում, վերոնշյալ իրավական ակտում առկա է լիարժեք համապատասխանություն սահմանված խնդիրների, դրանց լուծման համար առաջադրվող մեխանիզմների և ակնկալվող արդյունքների միջև, որոնք սահմանելիս կարևորվել է դրանց չափելիությունը: Ըստ այդմ, գիտահետազոտական գործունեության զարգացման հիմնական ուղղությունների և առաջնահերթությունների սահմանման համար որդեգրվել է հետևյալ մոտեցումը. *գիտահետազոտական գործունեության հիմնական ուղղությունները և*

առաջնահերթությունները պետք է ունենան երկու բաղադրիչ՝ հաստատուն և փոփոխուն.

- ✓ Հաստատուն բաղադրիչը հայագիտությունն է:
- ✓ Փոփոխուն բաղադրիչը, ըստ վերոնշյալ հայեցակարգում ամրագրված մոտեցումների, ի նկատի ունենալով Համալսարանում նախորդ հինգ տարիների գիտահետազոտական գործունեության արդյունքները, առաջիկա հինգ տարիների համար (ըստ էության, մինչև գործող ՌԾ-ի ժամկետի ավարտը) որոշվում/հաստատվում է ՌԾ-ի հաստատումից հետո (որը, որպես կանոն, հնգամյա է)՝ առաջիկա ուսումնական տարում:

Վերոնշյալ հայեցակարգում ամրագրված սկզբունքներին համապատասխան՝ ամբիոնների գիտահետազոտական հետաքրքրությունների և հավակնությունների ստացված տվյալների վերլուծության, ռեկտորի N31.07.23/01 հանձնարարականի հիման վրա կատարված գիտահետազոտական ներուժի SWOT վերլուծության և Կենտրոնում առկա բազայի համեմատական վերլուծության արդյունքում (հիմքերը՝ Կենտրոնում) **առաջին անգամ ձևավորվել և 15.11.2023թ.-ին Գիտական խորհրդի կողմից հաստատվել են Համալսարանում 2023-2027թթ. գիտահետազոտական գործունեության զարգացման հիմնական ուղղություններն ու առաջնահերթությունները**: Սակայն նշենք, որ գիտահետազոտական գործունեության հիմնական ուղղությունների և առաջնահերթությունների սահմանումը և վերջիններիս զարգացումը խրախուսող մեխանիզմների ներդրումը չեն ենթադրում, որ գիտահետազոտական գործունեության այլ ուղղությունները աջակցություն չեն ստանալու և չեն խրախուսվելու:

Աղյուսակ 2

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում 2023-2027թթ. գիտահետազոտական գործունեության զարգացման հիմնական ուղղությունները

№	Ամբիոն	Հիմնադրամում գիտահետազոտական գործունեության զարգացման հիմնական ուղղությունները՝ ըստ վերջին 5 տարիների արդյունքների (2018-2022թթ.)	Հիմնադրամում 2023-2027թթ. գիտահետազոտական գործունեության զարգացման հիմնական ուղղությունները՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանաշնորհման անվանացանկի բնագավառների և մասնագիտությունների
1	Մաթեմատիկա, ֆիզիկա և SS	• Միկրոպոլյար առաձգական բարակ ձողերի, սալերի և թաղանթների տեսություն • Դաշտի քվանտային տեսություն • Կոհերենտ ոչ ստացիոնար երևույթների ուսումնասիրություն նանոչափական կիսահաղորդչային կառուցվածքներում • Մաթեմատիկայի	**ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ** • Դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկա • Տեսական ֆիզիկա • Կոնդենսացված վիճակի ֆիզիկա **ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ** • Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (մաթեմատիկա,

		դասավանդման մեթոդիկա • Ֆիզիկայի դասավանդման մեթոդիկա	ֆիզիկա)
2	Աշխարհագրություն և սերվիս	• Ֆիզիկական աշխարհագրություն • Աշխարհաքաղաքականություն • Էթնոաշխարհագրություն • Զբոսաշրջություն • Ռեկրեացիոն աշխարհագրություն • Բնապահպանություն • Տնտեսական աշխարհագրություն • Երկրաբանություն • Բժշկական աշխարհագրություն • Երկրաբնապահպանություն • Զրաբանություն • Երկրաֆիզիկա • Քարտեզագրություն • Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա	**ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ** • Աշխարհագրություն • Ընդհանուր երկրաբանություն • Երկրաբնապահպանություն **ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ** • Ազգագրություն (ազգաբանություն) **ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ** • Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (աշխարհագրություն)
3	Կենսաբանություն և քիմիա	• Կենսաքիմիա • Մարդու ֆիզիոլոգիա • Կենդանաբանություն • Կենսատեխնոլոգիա • Բուսաբանություն • Կենսաբազմազանություն • Կենսաբանության դասավանդման մեթոդիկա	**ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ** • Կենսաքիմիա • Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա • Կենդանաբանություն. մակաբուծաբանություն. էկոլոգիա • Միկրոբիոլոգիա. կենսատեխնոլոգիա • Բուսաբանություն. սնկաբանություն. էկոլոգիա **ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ** • Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (կենսաբանություն)
4	Տնտեսագիտություն	• Կառավարում • Արտաքին քաղաքականություն և ինտեգրացիոն հարցեր • Տնտեսություն	**ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ** • Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում **ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ** • Քաղաքական գիտության տեսություն

5	Հայոց լեզու և գրականություն	• Հայոց լեզու • Ոճաբանություն • Բարբառագիտություն • Լեզվաբանություն • Լեզվի պատմություն • Գրականագիտություն (Հայ նոր գրականություն, Նորագույն և արդի գրականություն) • Գրաբար • Ժամանակակից հայոց լեզու • Գեղարվեստական լեզու • Պատմական քերականություն • Արդի հայերեն • Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա • Մայրենիի դասավանդման մեթոդիկա	**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ** • Հայոց լեզու • Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն • Հայ միջնադարյան և նոր գրականություն • Նորագույն շրջանի հայ գրականություն **ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ** • Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (հայոց լեզու, մայրենի)
6	Օտար լեզուներ և գրականություն	• Համեմատական տիպաբանություն • Թարգմանաբանության հիմունքներ • Ճանաչողական ոճագիտություն • Միջմշակութային հաղորդակցություն • Բանավոր խոսքի զարգացում • Բանահյուսություն • Գրականագիտություն • Ռուս գրականություն • Ժամանակակից ռուսաց լեզու • Լեզվաբանություն • Անգլերենի դասավանդման մեթոդիկա • Ռուսերենի դասավանդման մեթոդիկա • Գերմաներենի դասավանդման մեթոդիկա	**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ** • Ռոմանագերմանական լեզուներ • Ռուս գրականություն • Սլավոնական լեզուներ • Բանահյուսություն **ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ** • Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (անգլերեն, ռուսերեն, գերմաներեն)
7	Պատմություն և իրավագիտություն	• Հայոց պատմություն • Սահմանադրական իրավունք • Ընդհանուր պատմություն • Կրոնի պատմություն • Միջազգային հարաբերություններ • Ինտեգրացիոն գործընթացներ • Արևելագիտություն • Հայագիտություն • Կովկասագիտություն • Հանրային իրավունք	**ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ** • Հայոց պատմություն • Համաշխարհային պատմություն **ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ** • Կրոնի տեսություն և պատմություն **ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ** • Հանրային իրավունք

		• Ցեղասպանություն • Պատմամշակութային հուշարձանների պատմություն	**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ** • Միջազգային հարաբերություններ • Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ
8	Մանկավարժություն	• Ընդհանուր մանկավարժություն • Սոցիալական մանկավարժություն • Հատուկ մանկավարժություն • Մանկավարժական արժեբանություն • Մանկավարժական տեխնոլոգիաներ • Մանկավարժական վալեոլոգիա • Տարրական դպրոցի մանկավարժություն	**ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ** • Մանկավարժության տեսություն և պատմություն • Հատուկ մանկավարժություն (տիֆլոմանկավարժություն, սուրդոմանկավարժություն և օլիգոֆրենոմանկավարժություն, լոգոպեդիա, էրգոթերապիա)
9	Հոգեբանություն և սոցիոլոգիա	• Էթնոհոգեբանություն • Ընդհանուր հոգեբանություն • Սոցիալական հոգեբանություն • Զարգացման և կրթության հոգեբանություն • Կլինիկական և հատուկ հոգեբանություն • Ռազմական հոգեբանություն • Նեյրոհոգեբանություն • Մշակույթի սոցիոլոգիա • Միգրացիայի սոցիոլոգիա • Քրեական սոցիոլոգիա	**ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ** • Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն • Սոցիալական հոգեբանություն • Զարգացման և կրթության հոգեբանություն • Կլինիկական, հատուկ հոգեբանություն • Զինվորական և արտակարգ իրավիճակների հագեբանություն **ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ** • Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիոլոգիական տեխնոլոգիաներ և գործընթացներ
10	Սպորտ և արվեստ	• Ֆիզիկական դաստիարակության և սպորտի տեսության, դասավանդման մեթոդիկայի հարցեր • Դպրոցականների ռազմաֆիզիկական	**ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ** • Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն **ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

		դաստիարակություն • Ֆիզիկական կուլտուրայի պատմություն • Գեղարվեստական մարմնամարզություն • Ժամանակակից սպորտ • Բարձր նվաճումների սպորտ • Ֆիզիկական դաստիարակության տեսություն և մեթոդիկա • Հայկական արվեստ • Արվեստի պատմություն • Արվեստաբանություն • Արվեստի դասավանդման մեթոդիկա	• Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (ֆիզիկական կուլտուրա, արվեստ)
11	Ռազմական	-	-

Աղյուսակ 3

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում 2023-2027թթ. գիտահետազոտական գործունեության զարգացման առաջնահերթությունները

№	Ամբիոն(ներ)	Հիմնադրամում 2023-2027թթ. գիտահետազոտական գործունեության զարգացման առաջնահերթությունները՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանաշնորհման անվանացանկի մասնագիտությունների
1	Պատմություն և իրավագիտություն Հայոց լեզու և գրականություն Սպորտ և արվեստ Աշխարհագրություն և սերվիս	• Հայագիտություն (Հայոց պատմություն, Հայոց լեզու, Հայ միջնադարյան և նոր գրականություն, Նորագույն շրջանի հայ գրականություն, Արվեստագիտություն /Հայկական արվեստ/, Աշխարհագրություն /Հայաստանի աշխարհագրություն/)
2	Մաթեմատիկա, ֆիզիկա և ՏՏ	• Դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկա • Տեսական ֆիզիկա • Կոնդենսացված վիճակի ֆիզիկա • Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (մաթեմատիկա, ֆիզիկա)
3	Աշխարհագրություն և սերվիս	• Ընդհանուր երկրաբանություն

Հարկ է նշել, որ վերոնշյալ երկու իրավական ակտերը մինչ հաստատումը տեղադրված են եղել Համալսարանի պաշտոնական կայքի քննարկումների պատուհանում: Ընթացքում ստացված առաջարկությունները/դիտարկումները քննարկվել են 2023-2027թթ. Զարգացման Ռազմավարական ծրագրի և ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման, վերանայված ծրագրերի իրականացման արդյունքների վերհանման նպատակով ձևավորված հանձնաժողովում և հնարավորինս հաշվի են առնվել վերջնական տարբերակներում:

		1.2 (2.1.2)	Ինստիտուցիոնալ մակարդակով գիտահետազոտական և ուսումնական գործընթացների ինտեգրում (ուսումնառության բոլոր աստիճաններում՝ հաշվի առնելով նաև բուհի գիտահետազոտական առաջնահերթությունները):	I եռամսյակ 2024 - III եռամսյակ 2024 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակ	➢ Գիտահետազոտական գործունեության, հետազոտության և ուսումնառության կապը խրախուսող մշակված ու ներդրված ընթացակարգեր և մեխանիզմներ:
		1.3 (2.1.3)	Գիտամանկավարժական և ուսանողական համակազմերի շրջանում վերապատրաստումների անցկացում՝ նպատակաուղղված գիտական աշխատություններ գրելու և հետազոտական հմտությունների զարգացմանը, գիտական դրամաշնորհային ծրագրերում վերջիններիս ներգրավվածության բարձրացմանը:	I փուլ I եռամսյակ 2024 - IV եռամսյակ 2024 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակից 2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակ	➢ Գիտական աշխատություններ գրելու և հետազոտական հմտությունների զարգացման ուղեցույց: ➢ Գիտական դրամաշնորհային ծրագրերում մասնակցության թվաքանակի աճ:
		1.4 (2.1.4)	ՇՊՀ-ի գիտամանկավարժական կազմի գիտական գործունեության գնահատման մեխանիզմների ներդրում (հիմք ընդունելով ԿԳՄՄՆ Գիտության կոմիտեի կողմից առաջադրված «Գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշ»-ը հաշվելու մեթոդաբանությունը):	IV եռամսյակ 2024 2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակ	➢ ՇՊՀ-ի գիտամանկավարժական կազմի գիտահետազոտական գործունեության արդյունավետության ամենամյա գնահատում:

		1.5 (2.1.5)	Մագիստրատուրայի լավագույն շրջանավարտների համար բուհի կողմից սահմանված արտոնյալ պայմաններով ասպիրանտուրայում ուսումնառության հնարավորություն:	I եռամսյակ 2023 - III եռամսյակ 2023 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակ	➢ ՇՊՀ-ի ասպիրանտուրայի/հայցորդության ընդունելության և ուսուցման լավարկված կանոնակարգ: ➢ Ասպիրանտուրայի դիմորդների թվաքանակի աճ:

Համալսարանում հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերով (ասպիրանտուրա/հայցորդության համակարգ) ուսուցման գործընթացը 2013թ.-ից կարգավորվել է «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ում ասպիրանտուրայի/հայցորդության ընդունելության և ուսուցման կանոնակարգի հիման վրա, որը այնուհետև խմբագրվել է 2017, 2018, 2021թթ.-ին: Նշված կանոնակարգով, մինչև 2023-2024 ուստարին ընդունվածների համար, կարգավորվում են ասպիրանտուրա, հայցորդության համակարգ ընդունելության, ուսուցման, պրակտիկայի կազմակերպման ընթացակարգերը: Համալսարանում ասպիրանտուրա/հայցորդություն ընդունելության և ուսուցման կանոնակարգի **լավարկման արդյունքում գրեթե ամբողջությամբ խմբագրվել և 10.10.2023թ.-ի Գիտական խորհրդում հաստատվել է Համալսարանի հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերում (ասպիրանտուրա/հայցորդության համակարգ) ընդունելության/ձևակերպման և ուսուցման կանոնակարգը**: Մասնավորապես.

- ✓ Կանոնակարգում ավելացվել է նոր կետ, որտեղ ներկայացված է ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանով 3 կամ 4 տարի ուսումնառություն պլանավորած հայցորդի ուսումնառության ժամկետը մինչև 5 տարի երկարաձգելու և դեռևս չիրականացված հետազոտական աշխատանքների վերապլանավորում իրականացնելու գործընթացը: Մինչ այժմ այդ գործընթացն իրականացվել է առանց համապատասխան կարգավորումների:
- ✓ Կանոնակարգում ավելացվել է նոր կետ, որտեղ ներկայացված է ուսումնառության ընթացքում գիտական ղեկավարի և/կամ ատենախոսության թեմայի մասնակի կամ լրիվ փոփոխություն իրականացնելու գործընթացը: Մինչ այժմ այդ գործընթացն իրականացվել է առանց համապատասխան կարգավորումների:
- ✓ Կանոնակարգում ավելացվել է նոր կետ, որի համաձայն Համալսարանի դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրատուրայի կրթական աստիճանի գերազանցության դիպլոմով ավարտած շրջանավարտ հանդիսացող ասպիրանտ/հայցորդների, ինչպես նաև Համալսարանի ամրագրված գիտահետազոտական առաջնահերթությունների ուղղությամբ

ուսումնառող ասպիրանտ/հայցորդների ուսման վարձի համար սահմանվել են զեղչեր:

- ✓ Կանոնակարգի հավելվածում նախկինում ներդրված հետազոտողի ուսումնահետազոտական աշխատանքների պլանի և հետազոտողի ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանի փոխարեն ներկայացված է ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանի նոր ձևաչափը:
- ✓ Կանոնակարգում հստակեցվել են համապատասխանաբար ասպիրանտուրայի ընդունելության և հայցորդության ձևակերպման կազմակերպման համար Համալսարանի ռեկտորի հրամանով ստեղծվող ընդունող հանձնաժողովների կազմերը և սահմանվել է աշխատակարգը:
- ✓ Կանոնակարգում փոփոխվել են ամփոփիչ ստուգումների բազմագործոնային (վերջնական) գնահատականը ձևավորող 2 գործոնների կշիռները:
- ✓ Կանոնակարգում հստակեցվել է ասպիրանտի/հայցորդի գիտական ղեկավարի և ատենախոսության թեմայի հաստատման գործընթացը:
- ✓ Կանոնակարգում փոփոխվել են ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանում յուրաքանչյուր տարվա համար նախատեսվող կրեդիտների բաշխվածության շեմերը:
- ✓ Կանոնակարգում հստակեցված են ասպիրանտի/հայցորդի տարեկան հաշվետվությունների ներկայացման արդյունքում թողարկող ամբիոնի կողմից չատեստավորվելու, պայմանական ատեստավորվելու գործընթացները:
- ✓ Կանոնակարգում հստակեցվել են ասպիրանտի/հայցորդի գիտական ղեկավարի աշխատանքի վարձատրության չափերը՝ պայմանավորված ուսումնառության տարիներով:
- ✓ Կանոնակարգում հստակեցվել է 6-ամսյա աշխատանքային ստաժ ունեցող ասպիրանտի/հայցորդի պրակտիկային մասնկցության գործընթացը:

2023թ.-ի նոյեմբերին 1-ին անգամ 1-ին կուրսի ասպիրանտ/հայցորդների հետ, ռեկտորի N06.11.23/03 հանձնարարականի համաձայն, տեղեկատվական-իրազեկման հանդիպում անցկացվեց Կենտրոնի կողմից, որի ընթացքում ներկայացվեցին ուսումնառության ընթացքում ասպիրանտի/հայցորդի պարտականությունները, ատենախոսությունների թեմաների հաստատման, ուսումնահետազոտական աշխատանքների անհատական, ինչպես նաև հետազոտական աշխատանքների անհատական պլանների կազմման, մասնագիտական որակավորման քննությունների հանձնման, գիտական աշխատությունների (հոդվածների) տպագրման, պրակտիկայի կազմակերպման, ասպիրանտի/հայցորդի ազատման/հեռացման, ուսումնառության դադարեցման և վերականգնման, տարեկան ատեստավորման հետ կապված հարցերը: Նման հանդիպումներն այլևս կրելու են ամենամյա բնույթ:

Հարկ ենք համարում սակայն նշել, որ իրականացված բարեփոխումների արդյունքում հետբուհական կրթական ծրագրով դիմորդների աճ դեռ չենք հասցրել գրանցել, քանի որ բարեփոխումներն իրականացվել են ընդունելությանը զուգահեռ: Նման ցուցանիշ

հնարավոր կլինի գրանցել առաջիկայում:					
2 (2.2)	Բարելավված գիտահետազոտական միջավայր և արդյունավետ կառավարում	2.1 (2.2.1)	Գիտահետազոտական գործունեության զարգացմանը միտված լավարկված միջավայր:	I եռամսյակ 2023 - II եռամսյակ 2024 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակից 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակ	➢ Գիտահետազոտական գործունեության զարգացումը խրախուսող մշակված և ներդրված ընթացակարգեր: ➢ ՇՊՀ հիմնադրամի գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման լավարկված և գործող կարգ: ➢ Բարելավված գործառույթներով գործող Լեզվի կենտրոն:

Կենտրոնի կանոնադրությանը, Կենտրոնի 2023-2027թթ. հնգամյա/միամյա աշխատանքային ծրագրերին, Համալսարանում գիտահետազոտական գործունեության զարգացման քաղաքականությանը, Համալսարանում գիտահետազոտական գործունեության հիմնական ուղղությունների և առաջնահերթությունների սահմանման և զարգացման հայեցակարգին, Համալսարանում 2023-2027թթ. գիտահետազոտական գործունեության զարգացման հիմնական ուղղություններին ու առաջնահերթություններին համահունչ, կրթություն-գիտություն-նորարարություն-առևտրայնացում քառակուսու շրջանակում, Համալսարանում գիտահետազոտական գործունեության զարգացման նպատակով բացի առկա իրավական ակտերի խմբագրումից և կիրարկումից, ըստ ռեկտորի N18.07.23/09 հանձնարարականի, մշակվել և կիրարկվում են նոր իրավական ակտեր՝ առավել թիրախային մոտեցումներով, որոնց արդյունավետության գնահատումը, սակայն, հնարավոր կլինի իրականացնել առաջիկայում: *Համալսարանում 2023-2027թթ.-ի գիտահետազոտական գործունեության զարգացման նպատակով մշակվել և կիրարկվում են եռաստիճան նոր մեխանիզմներ՝*

I. գիտահետազոտական գործունեության բոլոր ուղղությունների զարգացում և խթանում,
II. ըստ առաջնահերթությունների՝ գիտահետազոտական գործունեության զարգացում և խթանում,
II. ըստ առաջնահերթությունների՝ գիտահետազոտական գործունեության

առևտրայնացման զարգացում և խթանում:

Հարկ է նշել, որ ստորև ներկայացվող բոլոր իրավական ակտերը մինչ հաստատումը տեղադրված են եղել Համալսարանի պաշտոնական կայքի քննարկումների պատուհանում, ինչի մասին իրազեկված են եղել Համալսարանի բոլոր ստորաբաժանումների աշխատակիցները և ուսանողները: Ընթացքում ստացված առաջարկությունները/դիտարկումները քննարկվել են Համալսարանի 2023-2027թթ. Զարգացման ռազմավարական ծրագրի և ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման, վերանայված ծրագրերի իրականացման արդյունքների վերհանման նպատակով ձևավորված հանձնաժողովում և հնարավորինս հաշվի են առնվել վերջնական տարբերակներում: Համալսարանում 2023-2027թթ. գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների ուղղությամբ զարգացում ապահովելու, հստակ տարբերակված երկարաժամկետ, միջնաժամկետ/կարճաժամկետ հետազոտական ծրագրեր մշակելու և իրականացնելու, Համալսարանում իրականացվող գիտահետազոտական գործունեության արդյունքները միջազգայնացնելու, ուսումնառություն-հետազոտություն կապն առավել ամուր դարձնելու նպատակով համալսարանի գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգի **լավարկման արդյունքում մշակվել և 24.11.2023թ.-ի Գիտական խորհրդում հաստատվել են 2 նոր կարգեր՝ Համալսարանի աշխատակիցներին և ուսանողներին գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների ուղղությամբ ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգ, Համալսարանի աշխատակիցներին և ուսանողներին գիտահետազոտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգ:** Նշված կարգերը և՛ կառուցվածքային, և՛ բովանդակային առումով հիմնովին և էապես տարբերվում են Համալսարանի գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման գործող կարգից: Մասնավորապես.

- ✓ Կարգերը բարելավվել են կառուցվածքային առումով, քանի որ, ըստ նրանցում նկարագրված ընթացակարգերի, առանձնացվել են բաժիններ:
- ✓ Գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների ուղղությամբ տրամադրվող դրամաշնորհը ներդրվել է որպես երկարաժամկետ՝ 24 կամ 36 ամիս ժամկետով, իսկ գիտահետազոտական գործունեության բոլոր ուղղություններով տրամադրվող դրամաշնորհը՝ միջնաժամկետ կամ կարճաժամկետ՝ 24 կամ 12 ամիս ժամկետով: Ընդ որում, 1-ին դեպքում մրցույթ հայտարարվում է ՌԾ-ի հաստատումից հետո՝ 1-ին և 3-րդ տարիներին, իսկ 2-րդ դեպքում՝ յուրաքանչյուր տարի: Ավելին, 1-ին դրամաշնորհի մրցույթի հաղթողներին տրամադրվող տարեկան գումարի առավելագույն չափը շուրջ 25%-ով գերազանցում է 2-րդ դրամաշնորհի մրցույթի հաղթողներին տրամադրվող տարեկան գումարի առավելագույն չափը:
- ✓ Կարևորելով Համալսարանի առավել մեծ թվով աշխատակիցների և ուսանողների ներգրավվածությունը գիտահետազոտական գործունեության համար տրամադրվող դրամաշնորհներում՝ գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների

ուղղությամբ տրամադրվող դրամաշնորհում ավելացվել է հայտը ներկայացնող խմբի անդամների թույլատրելի թիվը, ինչպես նաև հնարավորություն է տրվել թեմայի իրականացման ընթացքում խմբում կատարել փոփոխություններ՝ ներգրավելով նոր անձանց:

- ✓ Հստակեցվել, առավել չափելի են դարձել հայտը ներկայացնող խմբի անդամների նկատմամբ դրված պահանջները: Ավելին, գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների ուղղությամբ ներբուհական դրամաշնորհի շրջանակում խմբի անդամներին ներկայացվող պահանջներն առավել խիստ են գիտահետազոտական գործունեության արդյունքների միջազգայնացման տեսանկյունից:
- ✓ Կարգերում հստակեցվել են բոլոր գործընթացների ժամկետները և պատասխանատուները:
- ✓ Կարգերում հստակեցվել են մրցույթի անցկացման ընթացակարգը, մասնավորապես. հստակեցվել են մրցույթի անցկացման նպատակով ձևավորվող ներբուհական խորհրդի կազմը և աշխատակարգը, Կենտրոնի գործառույթները տվյալ կարգերի շրջանակներում, հայտերը արտաքին փորձաքննության ենթարկելու, ինչպես նաև բողոքարկման գործընթացները:
- ✓ Կարգերում հստակեցվել են թեմաների շրջանակներում իրականացվող հետազոտություններից ակնկալվող արդյունքները՝ ներառելով ուսումնառություն-հետազոտություն կապն ապահովող պարտադիր և ցանկալի արդյունքներ: Ավելին, գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների զարգացումն ապահովելու նպատակով՝ թեմաների շրջանակում իրականացվող հետազոտություններից ակնկալվող արդյունքներն առավել խիստ են միջազգայնացման տեսանկյունից:
- ✓ Լավարկվել են հայտի, ընթացիկ և ամփոփիչ հաշվետվությունների ձևաչափերը:
- ✓ Հայտերի գնահատումն առավել բազմաշերտ և բազմակողմանի դարձնելու ակնկալիքով առանձնացվել և լավարկվել են արտաքին փորձաքննության, ներբուհական խորհրդի գնահատման թերթիկները, ինչպես նաև ներդրվել է Կենտրոնի կողմից լրացվող գնահատման թերթիկ՝ տվյալ հայտի վերաբերյալ ամբիոնի կարծիքի, խմբի անդամների կողմից տպագրված աշխատանքների և դրամաշնորներում ներգրավվածության, նախկինում իրականացված ներբուհական դրամաշնորհների շրջանակներում հետազոտություններից ակնկալվող պարտադիր և ցանկալի արդյունքների առկայության կամ բացակայության հիման վրա:

Նշենք, որ 2023թ. դեկտեմբերին Համալսարանի աշխատակիցների և ուսանողների շրջանում Կենտրոնի կողմից, ռեկտորի N31.07.23/03, N06.11.23/03, հանձնարարականների համաձայն, դրամաշնորհային ծրագրերով զբաղվող աշխատանքային խմբի կողմից կազմակերպվել է տեղեկատվական-իրազեկման հանդիպում, որտեղ ներկայացվել են վերոնշյալ իրավական ակտերի նոր հնարավորությունները և առանձնահատկությունները: Նման հանդիպումներն այլևս կրելու են ամենամյա բնույթ: Հավելենք, որ վերոնշյալ աշխատանքային խմբի կողմից 2024թ.-ի ընթացքում նախատեսվում է կազմակերպել

Համալսարանի աշխատակիցների գիտահետազոտական կարողությունների զարգացմանը միտված վերապատրաստումներ/դասընթացներ:

Նշենք, որ ռեկտորի N31.07.23/01 հանձնարարականի համաձայն՝ կենտրոնի կողմից մշակվել և ներկայացվել են.

- Մեխանիզմներ ՊԴ կազմի և ուսանողների՝ միջազգային համատեղ հետազոտական նախագծերում ներգրավվածության ապահովման վերաբերյալ:
- Մեխանիզմներ գործընկեր համալսարանների, գիտական և հետազոտական կազմակերպությունների մասնագետների՝ ուսումնական, հետազոտական և գիտական գործընթացներում ներգրավման, հրավիրյալ պրոֆեսորի, դոցենտի ինստիտուտի զարգացման վերաբերյալ:

Ըստ այդմ վերոնշյալ 2 ուղղություններով աշխատանքները կարելի է զուգահեռ իրականացնել.

- Ուսումնասիրել և առանձնացնել ՀՀ այն համալսարանները, գիտական և հետազոտական կազմակերպությունները, որտեղ իրականացվում են Համալսարանում ամրագրված գիտահետազոտական ուղղություններին և առաջնահերթություններին համապատասխան կամ առնվազն մոտ միջազգային հետազոտական նախագծեր:
- Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի հետ համագործակցությամբ ուսումնական, իսկ այնուհետեև նաև հետազոտական և գիտական գործընթացներում ներգրավման նպատակով, առանձնացված համալսարաններից, գիտական և հետազոտական կազմակերպություններից հրավիրել համապատասխան ոլորտի պրոֆեսորների, դոցենտների:
- Ստեղծված համագործակցության շրջանակում համալսարանի ՊԴ կազմի և ուսանողական կազմի ներուժին համապատասխան փորձել ներգրավվել առանձնացված համալսարաններում, գիտական և հետազոտական կազմակերպություններում իրականացվող հետազոտական նախագծերում:
- Բացի ՀՀ համալսարաններից, գիտական և հետազոտական կազմակերպություններից փորձել Գյումրիում Ռուսաստանի գլխավոր հյուպատոսարանի միջնորդությամբ և աջակցությամբ համագործակցություն սկսել ՌԴ-ում գործող Sirius կազմակերպության հետ՝ Գյումրիում մասնաճյուղ բացելու ակնկալիքով:

Գիտահետազոտական գործունեության զարգացումը միջազգային հարթակում ապահովելու համար լավարկված միջավայր կարելի է համարել նաև համալարանում իրականացվող ERASMUS+ SMARTI ծրագրի շրջանակում Օտար լեզուների ուսուցման կենտրոնի հիմնադրումը, որն իր կանոնակարգված գործունեությունը կսկսի առաջիկայում:

		2.2 (2.2.2)	Գիտամանկավարժական կազմի գիտական գործունեության գնահատման արդյունքային ցուցանիշների ներդրում գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգում:	IV եռամսյակ 2024 2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակ	➢ ՇՊՀ հիմնադրամի գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման լավարկված և գործող կարգ:
		2.3 (2.2.3)	Գիտահետազոտական ծրագրերում ուսումնառողների և ՈՒԳԸ-ի ներգրավվածության խթանում:	IV եռամսյակ 2023 - III եռամսյակ 2027 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակից 2027-2028 ուստարվա 1-ին կիսամյակ	➢ Գիտահետազոտական գործունեության զարգացումը խրախուսող մշակված և ներդրված ընթացակարգեր: ➢ ՇՊՀ հիմնադրամի գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման լավարկված և գործող կարգ:
		2.4 (2.2.4)	Համալսարանում գիտական դպրոցների և հետազոտական լաբորատորիաների ձևավորման ու զարգացման համար բարենպաստ միջավայրի ստեղծում՝ նկատի ունենալով համալսարանի գիտական առկա ներուժը, վերջին տարիների գիտական ձեռքբերումները և առաջիկա տարիների ինչպես ՀՀ, այնպես էլ ՇՊՀ-ի գիտահետազոտական առաջնահերթությունները:	I եռամսյակ 2024 - III եռամսյակ 2027 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակից 2027-2028 ուստարվա 1-ին կիսամյակ	➢ Հիմնված և գործող շարունակական կրթության պրոբլեմային գիտամանկավարժական լաբորատորիա:

		2.5 (2.2.5)	Կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով կառուցվածքային փոփոխությունների իրականացում:	2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակ I եռամսյակ 2023- II եռամսյակ 2023	➢ Փոփոխված նոր կառուցվածք:

Համալսարանում գիտահետազոտական գործունեության հետաքրքրություններն ու հավակնություններն ամրագրված են Համալսարանի 2023-2027թթ. Զարգացման ռազմավարական ծրագրում, որտեղ ամրագրված ռազմավարական նպատակին հասնելու համար ձևակերպված են կոնկրետ խնդիրներ, լուծումներ, գործողություններ և կատարողականի ցուցիչներ: Մյուս կողմից համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման նպատակով մշակվել է այդ թերությունների վերացման վերանայված ծրագրի իրականացման ժամանակացույցը, որի «Հետազոտություն և զարգացում» բաժնում արտահայտված են գիտահետազոտական ոլորտում համալսարանի հավակնություններն ու առաջնահերթությունները՝ ակնկալվող վերջնական, միջանկյալ արդյունքներով, կատարողականի ցուցիչներով:

Նախանշված նպատակներին հասնելու նպատակով Հոգաբարձուների խորհրդի 27.05.2023թ.-ի N17.1 որոշման համաձայն՝ **համալսարանում իրականացվեցին կառուցվածքային փոփոխություններ, որի արդյունքում ձևավորվել է կառուցվածքային նոր ստորաբաժանում հանդիսացող Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոնը:** Հոգաբարձուների խորհրդի 27.05.2023թ.-ի N17.2 որոշմամբ հաստատվել է Համալսարանի հաստիքացուցակը, որի համաձայն Կենտրոնում առկա է 4 հաստիքային միավոր. Կենտրոնի տնօրեն, գիտական քաղաքականության և նորարարության պատասխանատու, հետբուհական կրթության համակարգող, օպերատոր-գործավար: Հարկ ենք համարում նշել, որ մշակվել և Համալսարանի ռեկտորի կողմից հաստատվել են բոլոր հաստիքային միավորների պաշտոնի նկարագրերը, որտեղ հստակ ձևակերպված են աշխատանքների նկարագրերը և պաշտոններին ներկայացվող պահանջները:

Կենտրոնի կողմից, ըստ ռեկտորի N30.06.23/05 հանձնարարականի, մշակվել և Գիտական խորհրդի կողմից 31.08.2023թ.-ին հաստատվել է Կենտրոնի նոր մշակված կանոնադրությունը, որտեղ ևս, Համալսարանի 2023-2027թթ. Զարգացման ռազմավարական ծրագրին համահունչ, որպես Կենտրոնի գործունեության հիմնական նպատակ և խնդիրներ, արտացոլված են գիտահետազոտական ոլորտում համալսարանի հավակնություններն ու առաջնահերթությունները: Մասնավորապես. Կենտրոնի գործունեության *հիմնական նպատակն* է բնական, հումանիտար և հասարակական գիտությունների տարբեր ուղղություններով արդիական և նորարար գիտական հետազոտությունների իրականացման, հետազոտության և ուսումնառության կապի ապահովումը:

Կենտրոնի գործունեության *հիմնական խնդիրներն են.*

✓ Հետազոտահենք կրթություն և բարձրորակ մարդկային ռեսուրսներ.

- Համալսարանի գիտահետազոտական առաջնահերթությունների մշակում:
- Ինստիտուցիոնալ մակարդակով գիտահետազոտական և ուսումնական գործընթացների ինտեգրում:
- Գիտամանկավարժական և ուսանողական համակազմերի շրջանում հետազոտական հմտությունների զարգացում:
- Համալսարանի գիտամանկավարժական կազմի գիտական գործունեության գնահատման մեխանիզմների ներդրում:

✓ Բարելավված գիտահետազոտական միջավայր և արդյունավետ կառավարում.

- Գիտահետազոտական գործունեության զարգացմանը միտված լավարկված միջավայր:
- Գիտամանկավարժական կազմի գիտական գործունեության գնահատման արդյունքային ցուցանիշների ներդրում գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհների տրամադրման կարգերում:
- Գիտահետազոտական ծրագրերում ուսումնառողների և ՈՒԳԸ-ի ներգրավվածության խթանում:
- Համալսարանում գիտական դպրոցների և հետազոտական լաբորատորիաների ձևավորման ու զարգացման համար բարենպաստ միջավայրի ստեղծում՝ նկատի ունենալով համալսարանի գիտական առկա ներուժը, վերջին տարիների գիտական ձեռքբերումները և առաջիկա տարիների ինչպես ՀՀ, այնպես էլ համալսարանի գիտահետազոտական առաջնահերթությունները:
- Կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով ըստ անհրաժեշտության կառուցվածքային փոփոխությունների իրականացում:

✓ Միջազգայնացում և համագործակցություն.

- Գիտական համագործակցության ընդլայնում ՀՀ և արտերկրի գիտահետազոտական կենտրոնների հետ՝ հնարավոր համատեղ ծրագրերի իրականացմամբ:
- Գիտամանկավարժական հետազոտությունների արդյունքների հնարավոր առևտրայնացում:

Կենտրոնի գործառույթները համակարգված, Համալսարանի 2023-2027թթ. Զարգացման ռազմավարական ծրագրին և Համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագրին համահունչ իրականացնելու նպատակով **Համալսարանի ռեկտորի կողմից 31.08.2023թ. հաստատվել են** [Կենտրոնի նոր մշակված 2023-2027թթ. հնգամյա/միամյա աշխատանքային ծրագրերը]():

		2.6 (2.2.6)	Լավագույնների խրախուսում՝ վերջնարդյունքում ակնկալելով ունենալ լավագույնս մոտիվացված գիտաշխատող:	2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակից 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակ I եռամսյակ 2023- II եռամսյակ 2023	➢ Գիտահետազոտական գործունեության զարգացումը խրախուսող մշակված և ներդրված ընթացակարգեր: ➢ Լավագույնների խրախուսման ներդրված և գործող կարգ (մասնավորապես, «Լավագույն գիտաշխատող» և այլ անվանակարգեր, պարգևատրումների, նյութական և բարոյական խրախուսման այլ ձևեր):

Համալսարանում 2023-2027թթ. գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների ուղղությամբ զարգացում ապահովելու, Համալսարանում իրականացվող գիտահետազոտական գործունեության արդյունքները միջազգայնացնելու, ուսումնառություն-հետազոտություն կապն առավել ամուր դարձնելու նպատակով Համալսարանի աշխատակիցների գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման ընթացակարգի **լավարկման արդյունքում մշակվել և 24.11.2023թ.-ի Գիտական խորհրդում հաստատվել է Համալսարանի աշխատակիցների և ուսանողների կողմից իրականացվող գիտահետազոտական գործունեության համար լրավճարի տրամադրման կարգը:** Մասնավորապես.

- ✓ Կարգը բարելավվել է կառուցվածքային առումով, քանի որ, ըստ նկարագրված ընթացակարգերի, առանձնացվել են բաժիններ:
- ✓ Կարգում հստակեցվել են բոլոր գործընթացների ժամկետները և պատասխանատուները:
- ✓ Գործող ընթացակարգում կիրառվող «հավելավճար» եզրույթը փոխարինվել է «լրավճար» եզրույթով:
- ✓ Կարգում հստակեցվել են լրավճարի տրամադրման վերջնական ցուցակն ուսումնասիրելու, վիճարկելի հարցերը քննարկելու նպատակով ձևավորվող խորհրդի կազմը և աշխատակարգը:
- ✓ Կարգում հստակեցվել են գիտահետազոտական գործունեության համար լրավճար

տրամադրելու պայմանները: ✓ Ուսանողների կողմից գիտահետազոտական գործունեության իրականացումը խթանելու, ուսումնառություն-հետազոտություն կապն ամրապնդելու նպատակով՝ *1-ին անգամ լրավճար սահմանվել է նաև ուսանողների համար:* ✓ Ուսումնառություն-հետազոտություն կապն ամրապնդելու նպատակով ավելացվել է կետ, որի համաձայն Համալսարանի ամբիոնների կողմից կազմակերպվող գիտական սեմինարների ընթացքում զեկուցմամբ ներկայանալու դեպքում տրամադրվում է լրավճար: ✓ Ավելացվել է կետ՝ գրագողության բացահայտված դեպքերի հետ կապված լրավճար տրամադրելու ընթացակարգի վերաբերյալ: ✓ Համալսարանում իրականացվող գիտահետազոտական գործունեության միջազգայնացմանը նպաստելու նպատակով՝ լրավճարի տրամադրման սանդղակում ավելացվել են նոր կետեր՝ բավական բարձր լրավճարի չափով: ✓ Լրավճարի տրամադրման սանդղակում գիտական գյուտի համար տրամադրվող լրավճարի չափն ավելացել է: ✓ Լրավճարի տրամադրման սանդղակում ավելացվել է նոր կետ՝ ստացված գիտական աստիճանի, գիտական կոչման համար: ✓ Լրավճարի տրամադրման սանդղակում ավելացվել է նոր կետ՝ մագիստրոսական թեզերի գրախոսում իրականացնելու համար լրավճարի սահմանմամբ: ✓ Համալսարանում ամրագրված գիտահետազոտական գործունեության զարգացման առաջնահերթությունների ուղղությամբ տպագրված աշխատանքների պարագայում տրամադրվող լրավճարի չափի համար ներդրվել է տարբերակված գործակից: Նշենք, որ առաջիկայում նախատեսվում է մշակել լավագույնների խրախուսման ներդրված և գործող կարգ, մասնավորապես, «Լավագույն գիտաշխատող» և այլ անվանակարգեր, պարգևատրումների, նյութական և բարոյական խրախուսման այլ ձևեր:					
3 (2.3)	Միջազգայնացում և համագործակցություն	3.1 (2.3.1)	Միջազգային վարկանիշային գիտական ամսագրերում հոդվածների հրապարակումների խրախուսում:	IV եռամսյակ 2023 - I եռամսյակ 2024 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակից 2-րդ կիսամյակ	➢ ՇՊՀ-ի աշխատակիցների գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման լավարկված և գործող ընթացակարգ:

		3.2 (2.3.2)	Գիտամանկավարժական հետազոտությունների արդյունքների առևտրայնացում՝ կրթական վճարովի ծառայությունների մատուցմամբ, մասնավորապես. ա/ ոչ մանկավարժական բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցողներին մանկավարժի որակավորման շնորհում՝ մոդուլային ուսուցման լիցենզավորված լրացական կրթական ծրագրի իրականացմամբ, բ/ արտաքին շահառուների վերապատրաստումների շրջանակի ընդլայնում և բազմազանեցում՝ առաջարկելով գործընթացի կազմակերպման ինչպես առկա (լսարանային), այնպես էլ առցանց և հիբրիդային տարբերակներ, գ/ գործատուների հետ համատեղ հետազոտական ծրագրերի իրականացում:	III եռամսյակ 2023 - III եռամսյակ 2027 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակից 2027-2028 ուստարվա 1-ին կիսամյակ	➢ Մանկավարժի որակավորում շնորհող մոդուլային լրացական դասընթաց: ➢ Գործող իրավակարգավորումների ներքո վերապատրաստման դասընթացներ հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների և ուսուցիչների, նախադպրոցական հաստատությունների տնօրենների, մանկավարժների և դաստիարակների շրջանում:
		3.3 (2.3.3)	Գիտական համագործակցության ընդլայնում ՀՀ և արտերկրի գիտահետազոտական կենտրոնների հետ՝ հնարավոր համատեղ ծրագրերի իրականացմամբ:	III եռամսյակ 2024 - III եռամսյակ 2027 2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակից 2027-2028 ուստարվա	➢ Գործատուների հետ առնվազն մեկ համատեղ հետազոտական ծրագիր: ➢ ՇՊՀ հիմնադրամի մագիստրատուրայի և բակալավրի շրջանավարտների ամփոփիչատեստավորման լավարկված և գործող

				1-ին կիսամյակ	ընթացակարգ: ➢ Գիտական համագործակցության շրջանակում որևէ բուհի և/կամ գիտահետազոտական կենտրոնի հետ առնվազն մեկ համատեղ ծրագրի իրականացում:

Աղյուսակ 1.2

Թերությունների վերացման գործողությունների ծրագրի կատարողական

N	*Ակնկալվող արդյունքը*	*Նախատեսվող միջանկյալ արդյունքները*		*Գործողության իրականացման ժամանակա-հատվածը*	*Կատարողականի ցուցիչ*
1 *(6.1)*	*Որոշակիացված գիտական ուղղվածություններ և առաջնահերթություններ, հետազոտության և գիտության միջազգայնացման քաղաքականություն*	1.1 *(6.1.1)*	*Աշխատաշուկայի, ՄՈՒՀ-ի գիտահետազոտական հետաքրքրությունների և հավակնությունների վերլուծություն*	*Փետրվար-մարտ 2023*	• *Հանձնաժողովի կողմից վեր հանված և վերլուծված կարիքներ*
Այս մասով շարադրված է Համալսարանի 2023-2027թթ.-ի Զարգացման ՌԾ-ի կատարողականի (Աղյուսակ 1.1) կետ 1-ի ենթակետ 1.1-ում:					
		1.2 *(6.1.2)*	*ՄՈՒՀ-ի գիտահետազոտական ներուժի SWOT վերլուծություն*	*Ապրիլ-մայիս 2023*	• *SWOT վերլուծություն*
Այս մասով շարադրված է Համալսարանի 2023-2027թթ.-ի Զարգացման ՌԾ-ի կատարողականի (Աղյուսակ 1.1) կետ 1-ի ենթակետ 1.1-ում:					
		1.3 *(6.1.3)*	*Հստակեցված գիտահետազոտական ոլորտներ և ուղղություններ, /լրա/մշակված և ներդրված հետազոտության և գիտության միջազգայնացման քաղաքականություն*	*Հունիս-օգոստոս 2023*	• *Լավարկված ՇՊՀ գիտության և հետազոտության միջազգայնացման քաղաքականություն*
Այս մասով շարադրված է Համալսարանի 2023-2027թթ.-ի Զարգացման ՌԾ-ի կատարողականի (Աղյուսակ 1.1)կետ 1-ի ենթակետ 1.1-ում:					

2 *(6.2)*	*6.2 Հետազոտության և ուսումնառության կապն ապահովող մշակված և ներդրված հայեցակարգ, հետազոտության և գիտության միջազգայացման քաղաքականությունից բխող հետազոտությունների իրականացման մշակված և ներդրված աշխատանքային պլաններ*	2.1 (6.2.1)	*Ուսումնառության հետ հետազոտության կապն ապահովող մշակված և ներդրված հայեցակարգ*	*Մարտ-մայիս 2023*	• *Լավարկված ԳՊՄԻ -ի մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, հաստատման, մշտադիտարկման և վերանայման քաղաքականություն*

Մինչ 2023թ.-ը Համալսարանում իրականացվող գիտահետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի կապն ապահովող առկա մեխանիզմներից կարելի է առանձնացնել ներքոնշյալները.

- Համալսարանի մագիստրատուրայի և բակալավրի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ընթացակարգով նախատեսված ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պատրաստումը, որոնք իրենց մեջ պարունակում են հետազոտական բաղադրիչ: Հարկ է նշել, որ գիտահետազոտական տարրեր պարունակող կուրսային, ավարտական աշխատանքները, մագիստրոսական թեզերը գլխավորապես առաջադրվում են ամբիոնների հիմնական գիտահետազոտական ուղղություններին համապատասխան: Ուսանողների կողմից հետազոտական աշխատանք կատարելու հմտությունները ձևավորվում են դեռևս բակալավրի կրթական ծրագրերի ուսումնական պլաններում ներառված կուրսային և ավարտական աշխատանքների կատարման միջոցով: Այնուհետև ուսանողների հետազոտական հմտությունները զարգանում են մագիստրատուրայի կրթական ծրագրերի ուսումնական պլաններում ներդրված դասընթացների (Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն, Հետազոտական աշխատանքի իրականացման մեթոդաբանություն), գիտահետազոտական պրակտիկայի և գլխավորապես՝ ՄԹ-ի կատարման օգնությամբ: Իսկ արդեն հետբուհական կրթական ծրագրերում «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերով (ասպիրանտուրա, հայցորդության համակարգ) ընդունելության/ձևակերպման և ուսուցման կանոնակարգով գիտահետազոտական գործունեության և ուսումնառության կապը հստակ արտահայտվում է ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանով, որտեղ առանձնացված են կրթական և հետազոտական բաղադրիչներ: Ավելին, կրթական բաղադրիչի կամընտրական ոչ մասնագիտական դասընթացների շարքում ներդրված են գիտահետազոտական գործունեությանը միտված մի շարք դասընթացներ (Գիտական էթիկա, Ակադեմիական գրագրություն օտար լեզուներով, Գիտական գրագրություն և աշխատանքների ձևակերպում,

Հետազոտական աշխատանքների կազմակերպում):

- Համալսարանի գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգով պարտադիր է թեման իրականացնող խմբում ուսանողի ներգրավվածությունը: Տվյալ կարգով նախատեսվում է նաև թեմաների իրականացման արդյունքների ներդնում ուսումնական գործընթացում, ինչը որոշ դեպքերում արտացոլվել է նաև որոշ դասընթացների թեմատիկ օրացուցային պլաններում:
- Հիմնադրամի ՊԴ կազմի պարբերաբար գնահատման և վարկանիշավորման կարգով առանձին գործակից է սահմանված դասախոսների ղեկավարությամբ ուսանողների ծավալած գիտահետազոտական աշխատանքների արդյունքների համար:
- Հիմնադրամի ուսանողների վարկանիշավորման և խրախուսման կարգով ուսանողների կողմից իրականացվող գիտական, գիտահետազոտական և գիտակազմակերպչական գործունեությունը գնահատվում է առանձին բաժնով և բավական բարձր գործակիցներով:
- Գիտահետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի կապն ապահովող հաջորդ մեխանիզմներից է Համալսարանում 2017-2018 ուստարվանից կազմակերպվող գիտական սեմինարները, որոնց ունկնդիր են հանդիսանում նաև համապատասխան մասնագիտությունների ուսանողները:

Առկա իրավիճակը բարելավելու և գիտահետազոտական գործունեության և ուսումնառության կապն ամրապնդելու նպատակով Հիմնադրամի՝ 2023-2027թթ.-ի Զարգացման ՌԾ-ի, Հիմնադրամի՝ 2023-2027թթ.-ի Զարգացման ՌԾ-ի իրականացման ժամանակացույցի, Հիմնադրամի Ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագրի իրականացման ժամանակացույցի, Կենտրոնի կանոնադրության, Կենտրոնի՝ 2023-2027թթ.-ի հնգամյա/ամենամյա աշխատանքային ծրագրի, Հիմնադրամում գիտահետազոտական գործունեության զարգացման քաղաքականության հենքի վրա, վերևում ներկայացված մեխանիզմներից զատ, արդեն ներկայացված իրավական ակտերում ներդրվել են մի քանի նոր մեխանիզմներ: Մասնավորապես՝

- Համալսարանում 2022թ.-ից մեկնարկած ՄԿԾ-ների բարելավման գործընթացի շրջանակներում բակալավրի կրթական ծրագրերի նոր ուսումնական պլաններում ներդրվել է նոր դասընթաց՝ «Մասնագիտական ոլորտում հետազոտական աշխատանքի իրականացման հիմունքներ» անվանմամբ: Իսկ Համալսարանի մագիստրատուրայի և բակալավրի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ընթացակարգի լավարկման արդյունքում մագիստրոսական թեզերի գնահատման ռուբրիկում առանձին կշիռով՝ 5 միավոր տրվում է թեզի շրջանակում տպագրված հոդվածի համար:
- «Հիմնադրամում աշխատակիցներին և ուսանողներին գիտահետազոտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգում, ինչպես նաև Հիմնադրամում աշխատակիցներին և ուսանողներին գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների ուղղությամբ ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգում հստակեցվել են թեմաների շրջանակներում իրականացվող հետազոտություններից ակնկալվող արդյունքները՝ ներառելով ուսումնառություն-հետազոտություն կապն ապահովող պարտադիր և ցանկալի արդյունքներ: Մասնավորապես.

- *պարտադիր արդյունք.* թեմայի շրջանակում իրականացված հետազոտության արդյունքները

մինչև թեմայի ավարտը պետք է ամփոփվեն առնվազն 30 էջ (A4 ձևաչափի) ծավալով գիտամեթոդական/ ուսումնագիտական/ ուսումնամեթոդական աշխատանքում, որը պետք է ներկայացված լինի վեցժամյա ոչ ֆորմալ դասընթացի տեսքով տվյալ և/կամ հարակից մասնագիտություններում սովորող ուսանողների շրջանում,

- *ցանկալի արդյունք.* մինչ թեմայի ավարտը ցանկալի է.

ա/ առնվազն 1 ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի կատարումը՝ թեմայի շրջանակում իրականացվող հետազոտության հենքի վրա,

բ/ ուսումնական գործընթացում հետազոտության արդյունքների ներդրումը տվյալ և/կամ հարակից մասնագիտությունների համապատասխան դասընթաց(ներ)ի թեմատիկ օրացուցային պլաններում (ԹՕՊ) համապատասխան բաժինների/թեմաների լավարկմամբ (ամբիոնի նիստի համապատասխան որոշմամբ):

Վերջին երկու «ա» և «բ» կետերում նշված ցանկալի արդյունքների առկայության հանգամանքը անդրադառնալու է Համալսարանի հայտարարած առաջիկա մրցույթներին խմբի անդամների կողմից ներկայացվելիք հայտի վերջնական գնահատականի վրա՝ դրան գումարելով տվյալ մրցույթում հայտի առավելագույն գնահատականի 1 տոկոսի չափով միավոր՝ խմբի ղեկավարի և կատարողներից յուրաքանչյուրի ընդգրկվածության դեպքում: Հետագա մրցույթներին խմբի ղեկավարի և/կամ կատարողների կողմից ներկայացված հայտի վերջնական գնահատականի ավելացումը գործելու է յուրաքանչյուրի ընդգրկվածությամբ առաջիկա 1 հայտի շրջանակում:

➢ Հիմնադրամի աշխատակիցների և ուսանողների կողմից իրականացվող գիտահետազոտական գործունեության համար լրավճարի տրամադրման կարգում ևս ներդրվել են գիտահետազոտական գործունեության և ուսումնառության կապն ապահովող շրջադարձային 2 մեխանիզմներ: Մասնավորապես՝

- Ուսանողների կողմից գիտահետազոտական գործունեության իրականացումը խթանելու, ուսումնառություն-հետազոտություն կապն ամրապնդելու նպատակով՝ 1-ին անգամ լրավճար (միանվագ խրախուսական վճար) սահմանվել է նաև ուսանողների համար:
- Լրավճարի տրամադրման սանդղակում ավելացվել է նոր կետ՝ ամբիոններում կազմակերպվող գիտական սեմինարների համար լրավճարի սահմանմամբ:

Այս մասով շարադրված է նաև Աղյուսակ 1.1-ի կետ1-ի ենթակետ 1.1, 1.5-ում, կետ 2-ի ենթակետ 2.1, 2.6- ում:

		2.2 *(6.2.2)*	*Հետազոտությունների իրականացման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ մշակված աշխատանքային պլաններ՝ չափելի ցուցիչներով կատարողականների գնահատումներով*	*Ամենամյա Մեկնարկը՝ հունիս-օգոստոս 2023*	• *Մշակված աշխատանքային ծրագրեր*

Այս մասով շարադրված է Համալսարանի 2023-2027թթ.-ի Զարգացման ՌԾ-ի

կատարողականի (Աղյուսակ 1.1) կետ 2-ի ենթակետ 2.1, 2.5-ում:					
3 *(6.3)*	*Գիտահետազոտական գործունեության զարգացումն ապահովող լավարկված միջավայր:*	3.1 *(6.3.1)*	*Գիտահետազոտական գործունեության զարգացումը խրախուսող մշակված և ներդրված մեխանիզմներ, նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսների հատկացման ընթացակարգ, դրամաշնորհային ծրագրերով զբաղվող ձևավորված աշխատանքային խումբ*	*Սեպտեմբեր 2023-փետրվար 20*	• *Գիտահետազոտական գործունեության զարգացումը խրախուսող մշակված և ներդրված մեխանիզմներ* • *Նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսների հատկացման ընթացակարգ* • *Լավարկված ԳՊՄՒ-ի կոլեկտիվ պայմանագիր* • *Լավարկված ՇՊՀ հիմնադրամի գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգ* • *Լավարկված ՇՊՀ-ի աշխատակիցների գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման ընթացակարգ*
		3.2 *(6.3.2)*	*ՊԴ կազմի զարգացած հետազոտական կարողություններ (դասընթացներ, վերապատրաստումներ և այլն)*	*Ամենամյա մեկնարկը՝ 2024*	• *Լավարկված ՇՊՀ գիտական քաղաքականության, որակի ապահովման ու կառավարման կենտրոնի կանոնադրություն*
		3.3 *(6.3.3)*	*Միջազգային համատեղ հետազոտական նախագծերում ուսանողների և ՊԴ կազմի ներգրավվածությունը ապահովող և խրախուսող մեխանիզմներ*	*Հունվար-հուլիս 2025*	• *Մշակված նոր իրավական ակտ*

		3.4 *(6.3.4)*	*6.3.4 Գործընկեր համալսարանների, գիտական և հետազոտական կազմակերպությունների մասնագետների ներգրավում ուսումնական, հետազոտական և գիտական գործընթացումներում, հրավիրյալ պրոֆեսորի, դոցենտի ինստիտուտի զարգացում*	*Հունվար-հուլիս 2025*	• *Լավարկված ԳՊՄԻ-ի դասախոսի ծանրաբեռնվածության ձևավորման հիմնական նորմեր* • *Լավարկված ԳՊՄԻ-ի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի ձևավորման կանոնակարգ*

Նշենք, որ վերոնշյալ նոր մշակված բոլոր իրավական ակտերի՝ Համալսարանի Գիտական խորհրդով հաստատված տարբերակները Կենտրոնի համակարգմամբ տեղադրված և հասանելի են պաշտոնական կայքի Կենտրոնի ընտրացանկի Փաստաթղթեր բաժնի Ներքին իրավական ակտեր ենթաբաժնում:

Այսպիսով, կարող ենք փաստել հաշվետու ժամանակահատվածում Կենտրոնի գործունեության լիարժեք համապատասխանությունը Համալսարանի 2023-2027թթ. Զարգացման ռազմավարական ծրագրին, ինչպես նաև վերջինիցս բխող Թերությունների վերացման գործողությունների ծրագրին:

3. ԿԵՆՏՐՈՆԻ ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

3.1 ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ 2022-2023 ՈՒՍՏԱՐՈՒՄ

Համալսարանում հետբուհական մասնագիտական կրթական ծրագրով (ասպիրանտուրա/հայցորդության համակարգ) ուսուցման գործընթացը 2013թ.-ից կարգավորվել է «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ում ասպիրանտուրայի/հայցորդության ընդունելության և ուսուցման կանոնակարգի հիման վրա, որը այնուհետև խմբագրվել է 2017, 2018, 2021թթ.-ին: Արդեն 2023-2024 ուստարում ընդունված ասպիրանտ/հայցորդների համար, ինչպես նշվել է սույն Հաշվետվության 2-րդ բաժնում, կգործի նոր խմբագրությամբ Համալսարանի հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերում (ասպիրանտուրա/հայցորդության համակարգ) ընդունելության/ ձևակերպման և ուսուցման կանոնակարգը:

Գիտահետազոտական գործունեության շարունակականություն և սահուն սերնդափոխություն ապահովելու նպատակով Համալսարանում *հետբուհական մասնագիտական կթական ծրագրերով (ասպիրանտուրա/հայցորդության համակարգ) ուսուցում կարող է կազմակերպվել* հետևյալ 4 բնագավառներով և 3 մասնագիտություններով՝

- ✓ Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ (Ա.00.00),
- ✓ Բանասիրական գիտություններ (Ժ.00.00),
- ✓ Մանկավարժական գիտություններ (ԺԳ.00.00),
- ✓ Պատմական գիտություններ (Է.00.00)
- ✓ Կենսաքիմիա (Գ.00.04),
- ✓ Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում (Ը.00.02),
- ✓ Աշխարհագրություն (ԻԴ.03.01):

Իսկ ըստ ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից հաստատված «Ատենախոսությունների թեմաները հաստատող հիմնարկների ցուցակ»-ի՝ Համալսարանում *ատենախոսությունների թեմաներ կարող են հաստատվել և մասնագիտական որակավորման քննություններ կարող են կազմակերպվել* ներքոնշյալ 5 մասնագիտություններով՝

- ✓ «Դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկա» (Ա.02.04),
- ✓ «Հայոց լեզու» (Ժ.02.01),
- ✓ «Մանկավարժության տեսություն և պատմություն» (ԺԳ.00.01),
- ✓ «Համաշխարհային պատմություն» (Է.00.02),
- ✓ Կենսաքիմիա (Գ.00.04)

2022-2023 ուստարում հետբուհական կրթական ծրագրի ասպիրանտուրա ընդունելություն չի կազմակերպվել, քանի որ ԿԳՄՍՆ հայտեր չեն ներկայացվել:

2022-2023 ուստարում հետբուհական կրթական ծրագրի հայցորդության համակարգ ձևակերպում կազմակերպվել է վերոնշյալ 4 բնագավառներով և 3 մասնագիտություններով: Աղյուսակ 4-ում ներկայացված են 2022-2023 ուստարում հետբուհական կրթական ծրագրեր (ասպիրանտուրա/հայցորդության համակարգ) ընդունելության/ձևակերպման արդյունքները, ինչպես նաև տվյալ ցուցանիշի համեմատական վերլուծությունը վերջին 5 ուստարիների կտրվածքով:

Աղյուսակ 4

Հետբուհական կրթական ծրագրեր (ասպիրանտուրա/հայցորդության համակարգ) ընդունելության/ձևակերպման արդյունքները վերջին 5 ուստարիների կտրվածքով

Մասնագիտություն		2018-2019 Ուստարի				2019-2020 ուստարի				2020-2021 ուստարի				2021-2022 ուստարի				2022-2023 ուստարի			
		Առկա ասպիրանտուրա	Հեռավար ասպիրանտուրա	Հայցորդություն	**Ընդամենը**	Առկա ասպիրանտուրա	Հեռավար ասպիրանտուրա	Հայցորդություն	**Ընդամենը**	Առկա ասպիրանտուրա	Հեռավար ասպիրանտուրա	Հայցորդություն	**Ընդամենը**	Առկա ասպիրանտուրա	Հեռավար ասպիրանտուրա	Հայցորդություն	**Ընդամենը**	Առկա ասպիրանտուրա	Հեռավար ասպիրանտուրա	Հայցորդություն	**Ընդամենը**
Մանկավարժության տեսություն և պատմություն	Դիմորդների քանակ	-	-	1	**1**	-	-	-	**-**	-	-	-	**-**	-	-	1	**1**	-	-	1	**1**
	Ընդունվածների/ձևակերպվածների քանակ	-	-	1	**1**	-	-	-	**-**	-	-	-	**-**	-	-	1	**1**	-	-	1	**1**
Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (հայոց լեզու)	Դիմորդների քանակ	-	-	1	**1**	-	-	-	**-**	-	-	-	**-**	-	-	-	**-**	-	-	-	**-**
	Ընդունվածների/ձևակերպվածների քանակ	-	-	0	**0**	-	-	-	**-**	-	-	-	**-**	-	-	-	**-**	-	-	-	**-**
Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ	Դիմորդների քանակ	-	-	-	**-**	-	-	1	**1**	-	-	-	**-**	-	-	-	**-**	-	-	-	**-**
	Ընդունվածների/ձևակերպվածների քանակ	-	-	-	**-**	-	-	1	**1**	-	-	-	**-**	-	-	-	**-**	-	-	-	**-**
Նորագույն շրջանի հայ գրականություն	Դիմորդների քանակ	-	-	-	**-**	-	-	-	**-**	-	-	1	**1**	-	-	-	**-**	-	-	-	**-**
	Ընդունվածների/ձևակերպվածների քանակ	-	-	-	**-**	-	-	-	**-**	-	-	1	**1**	-	-	-	**-**	-	-	-	**-**
Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (ֆիզիկա)	Դիմորդների քանակ	-	-	-	**-**	-	-	-	**-**	-	-	-	**-**	-	-	1	**1**	-	-	-	**-**
	Ընդունվածների/ձևակերպվածների քանակ	-	-	-	**-**	-	-	-	**-**	-	-	-	**-**	-	-	1	**1**	-	-	-	**-**
Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում	Դիմորդների քանակ	-	-	-	**-**	-	-	-	**-**	-	-	-	**-**	-	-	1	**1**	-	-	-	**-**
	Ընդունվածների/ձևակերպվածների քանակ	-	-	-	**-**	-	-	-	**-**	-	-	-	**-**	-	-	1	**1**	-	-	-	**-**
Աշխարհագրություն	Դիմորդների քանակ	-	-	-	**-**	-	-	-	**-**	-	-	-	**-**	-	-	5	**5**	-	-	-	**-**

	Ընդունվածների/ձևակերպվածների քանակ	-	-	-	**-**	-	-	-	**-**	-	-	-	**-**	-	-	5	**5**	-	-	-	**-**
Ռոմանագերմանական լեզուներ	Դիմորդների քանակ	-	-	-	**-**	-	-	-	**-**	-	-	-	**-**	-	-	-	**-**	-	-	1	**1**
	Ընդունվածների/ձևակերպվածների քանակ	-	-	-	**-**	-	-	-	**-**	-	-	-	**-**	-	-	-	**-**	-	-	1	**1**

Այսպիսով, 2021-2022 ուստարում նկատվեց դիմորդների թվաքանակի աճ՝ պայմանավորված նոր մասնագիտություններով ուսումնառություն կազմակերպելու թույլտվության ձեռքբերմամբ:

Հարկ է նշել, որ 2022-2023 ուստարում ասպիրանտուրա/հայցորդության համակարգ ընդունված/ձևակերպվածների ատենախոսությունների թեմաներն ու գիտական ղեկավարները հաստատվել են Համալսարանում ասպիրանտուրայի և հայցորդության ընդունելության և ուսուցման կանոնակարգով սահմանված ժամկետներում: Այնուհետև, կանոնակարգի համաձայն, սովորողների, նրանց գիտական ղեկավարների, թողարկող ամբիոնների մասնակցությամբ և Կենտրոնի համակարգմամբ կազմվել են Հետազոտողի ուսումնահետազոտական աշխատանքների, հետազոտողի ուսումնահետազոտական աշխատանքների անհատական և հետազոտողի հետազոտական աշխատանքների անհատական պլանները, որոնք հաստատվել են Համալսարանի Գիտական խորհրդում:

Ստորև բերված Աղյուսակ 5-ում ներկայացված են հետբուհական կրթական ծրագրի բոլոր մասնագիտությունների ուղղությամբ 2022-2023 ուստարում սովորողների քանակը:

Աղյուսակ 5

Հետբուհական կրթական ծրագրի մասնագիտությունների ուղղությամբ 2022-2023 ուստարում սովորողների քանակ

«Մանկավարժության տեսություն և պատմություն»		
Ուսուցման ձև	**Կուրս**	**Սովորողների քանակ**
Հայցորդություն	I	1
	II	1
	III	-
	IV	-
	V	2
Ընդամենը		**4**
«Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (ֆիզիկա)»		
Ուսուցման ձև	**Կուրս**	**Սովորողների քանակ**
Հայցորդություն	I	-
	II	1
	III	-
	IV	-
	V	-
Ընդամենը		**1**
«Աշխարհագրություն»		
Ուսուցման ձև	**Կուրս**	**Սովորողների քանակ**
Հայցորդություն	I	-
	II	2
	III	-
	IV	-
	V	-
Ընդամենը		**2**
«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»		
Ուսուցման ձև	**Կուրս**	**Սովորողների քանակ**
Հայցորդություն	I	-

	II	1
	III	-
	IV	-
	V	-
Ընդամենը		**1**
«Նորագույն շրջանի հայ գրականություն»		
Ուսուցման ձև	**Կուրս**	**Սովորողների քանակ**
Հայցորդություն	I	-
	II	-
	III	1
	IV	-
	V	-
Ընդամենը		**1**
«Հայոց լեզու»		
Ուսուցման ձև	**Կուրս**	**Սովորողների քանակ**
Հայցորդություն	I	-
	II	-
	III	-
	IV	1 (տարկետում)
	V	1
Ընդամենը		**2**
«Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, տարիքային, մանկավարժական, խմբային գործունեություն)»		
Ուսուցման ձև	**Կուրս**	**Սովորողների քանակ**
Հայցորդություն	I	-
	II	-
	III	-
	IV	-
	V	1
Ընդամենը		**1**
Ընդամենը		**12**

Ստորև բերված Գծապատկեր 1-ում ներկայացված են հետբուհական կրթական ծրագրով սովորողների քանակը վերջին 5 ուստարիների կտրվածքով.

Գծապատկեր 1

Հետբուհական կրթական ծրագրով սովորողների քանակը վերջին 5 ուստարիների կտրվածքով



Հետբուհական կրթական ծրագրով սովորողների գենդերային բաշխվածությունը 2022-2023 ուստարում ունի Գծապատկեր 2-ում պատկերված տեսքը.

Գծապատկեր 2

Հետբուհական կրթական ծրագրով սովորողների գենդերային բաշխվածությունը 2022-2023 ուստարում



Հետբուհական կրթական ծրագրում ուսումնառությունն իրականացվում է վճարովի և անվճար հիմունքներով: Անվճար ուսումնառության հնարավորություն առկա է միայն ասպիրանտուրայի (առկա կամ հեռակա) դեպքում, իսկ այս տարբերակից շատ դեպքերում դիմորդները խուսափում են՝ պայմանավորված ընդունելության քննություններով (օտար լեզվից և մասնագիտությունից): Այդ տեսանկյունից 2022-2023 ուստարվա պատկերը ներկայացված է Գծապատկեր 3-ում:

Գծապատկեր 3

Հետբուհական կրթական ծրագրով սովորողների բաշխվածությունը 2022-2023 ուստարում՝ ըստ ուսումնառության վճարովի և անվճար հիմունքների



Ասպիրանտուրայում/հայցորդության համակարգում ուսուցման լրիվ բեռնվածությունը համարժեք է 180 կրեդիտի և բաղկացած է 2 փոխկապակցված մասերից՝ կրթական և հետազոտական: 50 կրեդիտը հատկացվում է կրթական, իսկ 130 կրեդիտը՝ հետազոտական բաղադրիչին: *Կրթական բաղադրիչն* ապահովելու նպատակով 2022-2023 ուստարում ուսումնառությունը կազմակերպվել է ըստ հետևյալ ժամանակացույցի.

- ✓ Գարնանային շրջան՝ մարտի 20- ապրիլի 21
- ✓ Աշնանային շրջան՝ նոյեմբերի 21-դեկտեմբերի 23, դեկտեմբերի 5-դեկտեմբերի 16

Նշված ժամանակացույցին համապատասխան՝ Կենտրոնի կողմից համակարգվել է հետբուհական կրթական ծրագրում ուսումնառության գործընթացը. հետազոտողների ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլաններին համապատասխան դասացուցակների կազմում և հաստատում (տեղադրված է Համալսարանի պաշտոնական կայքի Կենտրոնի ընտրացանկի Հետբուհական կրթություն բաժնում), ուսումնառության գործընթացի և սովորողների հաճախելիության վերահսկում, դասընթացների առարկայական նկարագրիչների և ԹՕՊ-երի հավաքագրում, մատյանների պատշաճ լրացման վերահսկում, քննատախտակի կազմում և հաստատում (տեղադրված է Համալսարանի պաշտոնական կայքի Կենտրոնի ընտրացանկի Հետբուհական կրթություն բաժնում), հարցաշարերի և հարցատոմսերի հավաքագրում դասընթացն իրականացնող դասախոսից և տրամադրում սովորողներին, քննությունների կազմակերպում և արդյունքների մուտքագրում ՇՊՀ ուսանողների էլեկտրոնային բազա:

2022-2023 ուստարում հետբուհական կրթական ծրագրով նախատեսված պրակտիկաներն իրականացվել են 14.11.2022թ.-23.12.2022թ. և 28.11.2022թ.-16.12.2022թ. շրջաններում: Պրակտիկայի իրականացման հետ կապված մանրամասները ներկայացված են Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6

2022-2023 ուստարում հետբուհական կրթական ծրագրով նախատեսված պրակտիկաներ

Սողորոդի ազգանուն, անուն, հայրանուն	Պրակտիկայի վայր	Պրակտիկայի անցկացման ժամանակաշրջան
Շահբազյան Անի Խաչիկի	Վանաձորի թվով 5 դպրոցներ, Երևանի թիվ 155 հիմնական դպրոց	14.11.2022թ.-23.12.2022թ.
Մարտիրոսյան Դավիթ Վարդանի	ՇՊՀ, Աշխարհագրության և սերվիսի ամբիոն	28.11.2022թ.-16.12.2022թ.
Մելիքսեթյան Արեգնազ Վահրիճի	Շիրակի մարզային գրադարան, ՇՊՀ-ի գրադարան	14.11.2022թ.-23.12.2022թ.
Յուզբաշյան Խաչատուր Գեորգիի	ՇՊՀ, Մանկավարժության ամբիոն	14.11.2022թ.-23.12.2022թ.

Ստորև բերված Աղյուսակ 7-ում ներկայացված են հետբուհական կրթական ծրագրում ընթացիկ սովորողների անհատական առաջադիմությունը կրթական բաղադրիչից (ներառյալ պրակտիկա):

Աղյուսակ 7

Հետբուհական կրթական ծրագրում ընթացիկ սովորողների անհատական առաջադիմությունը կրթական բաղադրիչից (ներառյալ պրակտիկա)

№	Սովորողի ազգանուն, անուն, հայրանուն	Կիսամյակ										ՄՈԳ
		1	2	3	4	5	6	7	8	9	10	
1	Մելքոնյան Շողիկ Արամայիսի	95 (2)[1]	95,75 (2)									**95,4**
2	Յուզբաշյան Խաչատուր Գեորգիի	94,5 (2)	91 (3)	94 (4)	92,5 (2)							**93**
3	Շահբազյան Անի Խաչիկի	92,5 (2)	89,5 (2)	95,8 (4)	97,7 (3)							**93,9**
4	Ալեքսանյան Մանե Աշոտի	90,5 (2)	97 (2)	96 (2)	94,5 (2)							**94,5**
5	Մարտիրոսյան Դավիթ Վարդանի	95 (2)	87(2)	87,7 (2)	-							**89,4**
6	Մկրտչյան Համեստ Ալեքսանի	92,5 (2)	95,5 (2)	90,5 (2)	98 (1)							**94,1**
7	Մելիքսեթյան Արեգնազ Վահրիճի	97 (2)	94,5 (2)	73,5 (2)	88,5 (2)	88 (1)	-					**87,8**
8	Ազիզբեկյան Տաթևիկ Երվանդի	99,33 (3)	100 (1)	99,25 (3)	100 (1)	98 (1)	94 (1)	98 (2)				**98,3**
9	Մինասյան Գոհար Սայաթի	99,5 (1)	98,7 (3)	96,3 (3)	99,8 (3)	-	-	-	-	-	-	**98,6**
10	Մելիքյան Լուսինե Հենրիկի	96 (2)	87,3 (3)	81,3 (3)	94,5 (3)	-	-	-	-	-	-	**89,8**
11	Նիկողոսյան Քրիստինե Գագիկի	93,4 (5)	92,5 (4)	97 (2)	97 (2)	99,2 (3)	97 (1)					**96**
12	Պապոյան Աննա Կարլենի	90,8 (5)	87 (4)	98 (2)	95 (4)	100 (2)		100 (1)				**95,1**

Այսպիսով, կարող ենք փաստել, որ 2022-2023 ուստարում հետբուհական կրթական ծրագրում սովորողները կուտակել են իրենց ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլաններով կրթական բաղադրիչի համար նախատեսված կրեդիտները:

[1] Փակագծում նշված է դասընթացների քանակը, որի արդյունքում ձևավորվել է տվ յալ կիսամյակի ՄՈԳ-ը:

Ստորև բերված Աղյուսակ 8-ում ներկայացված է հետբուհական կրթական ծրագրում ընթացիկ սովորողների իրականացրած գործունեությունը *հետազոտական բաղադրիչից*՝ տպագրված հոդվածների քանակը:

Աղյուսակ 8

Հետբուհական կրթական ծրագրում ընթացիկ սովորողների իրականացրած գործունեությունը հետազոտական բաղադրիչից (տպագրված հոդվածների քանակ)

№	Սովորողի ազգանուն, անուն, հայրանուն	Տարի					Ընդամենը
		1	2	3	4	5	
1	Մելքոնյան Շողիկ Արամայիսի	-	-				-
2	Յուզբաշյան Խաչատուր Գեորգիի	9	2				11
3	Շահբազյան Անի Խաչիկի	3	0				3
4	Ալեքսանյան Մանե Աշոտի	-	-				-
5	Մարտիրոսյան Դավիթ Վարդանի	0	1				1
6	Մկրտչյան Համեստ Ալեքսանի	0	0				0
7	Մելիքսեթյան Արեգնազ Վահրիճի	0	0	2			2
8	Ազիզբեկյան Տաթևիկ Երվանդի	0	1	2			3
9	Մինասյան Գոհար Սայաթի	2	2	1	1	0	6
10	Մելիքյան Լուսինե Հենրիկի	0	2	2	2	0	6
11	Նիկողոսյան Քրիստինե Գագիկի	0	0	1	1	1	3
12	Պապոյան Աննա Կարլենի	0	1	0	0	2	3

Հետբուհական կրթական ծրագրում սովորողների՝ 2022-2023 ուստարվա գործունեության հաշվետվությունների ներկայացումը և ատեստավորումը իրականացվել է 2023թ. նոյեմբերին՝ ըստ Կենտրոնի կողմից կազմված և ռեկտորի կողմից հաստատված ժամանակացույցի (տեղադրված է Համալսարանի պաշտոնական կայքի Կենտրոնի ընտրացանկի Հետբուհական կրթություն բաժնում): Ատեստավորման արդյունքները ներկայացված են ստորև բերված Աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9

Հետբուհական կրթական ծրագրում սովորողների՝ 2022-2023 ուստարվա ատեստավորման արդյունքներ

№	Սովորողի ազգանուն, անուն, հայրանուն	Նախկին ատեստավորումից մնացած կրեդիտ պարտք	2022-2023 ուստարում նախատեսված կրեդիտներ	2022-2023 ուստարում կուտակած կրեդիտներ	Ատեստավորման արդյունքներ
1	Մելքոնյան Շողիկ Արամայիսի	-	20	20	Ատեստավորված է
2	Յուզբաշյան Խաչատուր Գեորգիի	-	41	41 (որից 4-ը կուտակել է 1-ին տարում)	Ատեստավորված է
3	Շահբազյան Անի Խաչիկի	-	37	37	Ատեստավորված է

4	Ալեքսանյան Մանե Աշոտի	-	20	20	Ատեստավորված է
5	Մարտիրոսյան Դավիթ Վարդանի	1	24	23	Ատեստավորված է
6	Մկրտչյան Համեստ Ալեքսանի	-	21	20	Ատեստավորված է
7	Մելիքսեթյան Արեգնազ Վահրիճի	-	24	24	Ատեստավորված է
8	Ազիզբեկյան Տաթևիկ Երվանդի	-	-	-	Դադարեցրել է ուսումնառությունը (տարկետում)
9	Մինասյան Գոհար Սայաթի	-	82	2	Ուսումնառության ժամկետը լրացել է
10	Մելիքյան Լուսինե Հենրիկի	-	81	81	Ուսումնառության ժամկետը լրացել է
11	Նիկողոսյան Քրիստինե Գագիկի	4	43	25	Ուսումնառության ժամկետը լրացել է
12	Պապոյան Աննա Կարլենի	4	40	24	Ուսումնառության ժամկետը լրացել է

Ստորև ներկայացված Աղյուսակ 10-ում բերված են 2022-2023 ուստարում հետբուհական կրթական ծրագրում ուսումնառությունն ընդհատածների (ազատված, հեռացված, դադարեցրած) և վերականգնվածների տվյալները՝ ըստ մասնագիտությունների:

Աղյուսակ 10

2022-2023 ուստարում հետբուհական կրթական ծրագրում ուսումնառությունն ընդհատածների (ազատված, հեռացված, դադարեցրած) և վերականգնվածների տվյալները՝ ըստ մասնագիտությունների

Մասնագիտություն	**Ազատված սովորողների քանակ**	**Հեռացված սովորողների քանակ**	**Ուսումնառությունը դադարեցրածների քանակ**	**Վերականգնվածների քանակ**
Հայոց լեզու	-	-	1	1
Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, տարիքային, մանկավարժական, խմբային գործունեություն)	-	-	-	1
Նորագույն շրջանի հայ գրականություն	1	-	-	-
Ռոմանագերմանական լեզուներ	1	-	1	-

2022-2023 ուստարում ուսումնառությունն ավարտել են թվով 4 հայցորդներ, ովքեր սակայն դեռ չեն անցել ատենախոսության նախնական քննարկում: Ավելին, 2022-2023 ուստարում հետբուհական կրթական ծրագրով սովորած նախկին

հայցորդ/ասպիրանտներից որևէ մեկը չի անցել ատենախոսության նախնական քննարկում:

Ստորև ներկայացված Աղյուսակ 11-ում բերված է Համալսարանի ՊԴ կազմի և հետբուհական կրթական ծրագրով սովորողների հարաբերակցությունը վերջին 5 ուստարիների կտրվածքով: Ցուցանիշը մեծապես աճել է, ինչը հիմնականում պայմանավորված է ասպիրանտ/հայցորդների թվի նվազմամբ:

Աղյուսակ 11

Համալսարանի ՊԴ կազմի և հետբուհական կրթական ծրագրով սովորողների հարաբերակցությունը վերջին 5 ուստարիների կտրվածքով

Ուստարի	2018-2019	2019-2020	2020-2021	2021-2022	2022-2023
ՊԴ կազմի թվաքանակ	242	252	250	247	234
Ասպիրանտ/հայցորդների թվաքանակ	15	8	5	9	12
ՊԴ կազմ/ասպիրանտ/հայցորդների հարաբերակցություն	16,1	31,5	50	27,4	19,5

Ստորև ներկայացված Գծապատկեր 4-ում բերված են Համալսարանի ՊԴ կազմի բաշխվածությունն՝ ըստ գիտական աստիճանների և գիտական կոչումների (31.08.2023թ.-ի դրությամբ):

Գծապատկեր 4

Համալսարանի ՊԴ կազմի բաշխվածությունն՝ ըստ գիտական աստիճանների և գիտական կոչումների (31.08.2023թ.-ի դրությամբ)

Ըստ գիտական աստիճանների

- Գիտությունների դոկտոր՝ 14
- Գիտությունների թեկնածու՝ 117
- Առանց գիտական աստիճանի՝ 100

Ըստ գիտական կոչումների

- Պրոֆեսոր՝ 14
- Դոցենտ՝ 100
- Առանց գիտական կոչման՝ 120





Խնդիրներ	Լուծումներ
Ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանով 3 կամ 4 տարի ուսումնառություն պլանավորած հայցորդի ուսումնառության ժամկետը մինչև 5 տարի երկարաձգելու և դեռևս չիրականացված հետազոտական աշխատանքների վերապլանավորում իրականացնելու գործընթացի իրականացում՝ առանց համապատասխան կարգավորումների:	Համալսարանի հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերում (ասպիրանտուրա/հայցորդության համակարգ) ընդունելության/ ձևակերպման և ուսուցման կանոնակարգում ավելացվել է նոր կետ (4.27), որտեղ հստակ ներկայացված է տվյալ գործընթացի իրականացման ընթացակարգը:
Ուսումնառության ընթացքում գիտական ղեկավարի և/կամ ատենախոսության թեմայի մասնակի կամ լրիվ փոփոխություն իրականացնելու գործընթաց՝ առանց համապատասխան կարգավորումների:	Համալսարանի հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերում (ասպիրանտուրա/հայցորդության համակարգ) ընդունելության/ ձևակերպման և ուսուցման կանոնակարգում ավելացվել է նոր կետ (4.28), որտեղ հստակ ներկայացված է տվյալ գործընթացի իրականացման ընթացակարգը:
Ասպիրանտի/հայցորդի հեռացումը/ազատումը, ուսումնառության դադարեցումը և վերականգնումը՝ առանց համապատասխան կարգավորումների:	Համալսարանի հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերում (ասպիրանտուրա/հայցորդության համակարգ) ընդունելության/ ձևակերպման և ուսուցման կանոնակարգում ավելացվել է նոր բաժին (5), որտեղ հստակ ներկայացված է տվյալ գործընթացների իրականացման ընթացակարգը:
Հետբուհակա կրթական ծրագրերում սովորողների թվի նվազում:	Համալսարանի հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերում (ասպիրանտուրա/հայցորդության համակարգ) ընդունելության/ ձևակերպման և ուսուցման կանոնակարգում ավելացվել է նոր կետ (4.22), որի համաձայն Համալսարանի դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրատուրայի կրթական աստիճանի գերազանցության դիպլոմով ավարտած շրջանավարտ հանդիսացող ասպիրանտ/հայցորդների, ինչպես նաև Համալսարանի ամրագրված գիտահետազոտական առաջնահերթությունների ուղղությամբ ուսումնառող ասպիրանտ/հայցորդների ուսման վարձի համար սահմանվել են զեղչեր՝ համապատասխանաբար 15%, 25%:

3.2 2023Թ.-ԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2023 թ.-ի ընթացքում Համալսարանի աշխատակիցների և ուսումնառողների կողմից իրականացված գիտահետազոտական գործունեության արդյունքներն ամփոփված են 118 գիտական/գիտամեթոդական հոդվածներում, 5 թեզիսներում, 3 ուսումնամեթոդական/գիտամեթոդական/ուսումնագիտական աշխատանքներում (Աղյուսակ 12, 13):

Աղյուսակ 12

Աշխատակիցների 2023 թ. գիտահետազոտական գործունեության վերլուծությունն ըստ ստորաբաժանումների[2]

Ստորաբաժանում	Գիտական աշխատությունների թիվ	Աշխատակիցների թիվ (31.08.2023թ. դրությամբ)	Գիտական աշխատությունների թիվ / Աշխատակիցների թիվ
Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ			
Մաթեմատիկա, ֆիզիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ	29	26	1,16
Աշխարհագրություն և սերվիս	5	14	0,36
Կենսաբանություն և քիմիա	11	20	0,55
Տնտեսագիտություն	3	17	0,17
Ընդամենը	**48**	**77**	**0,62**
Հասարակական գիտությունների ֆակուլտետ			
Մանկավարժություն	5	26	0,19
Հոգեբանություն և սոցիոլոգիա	17	26	0,65
Սպորտ և արվեստ	4	24	0,17
Ընդամենը	***25***	**76**	**0,33**
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ			
Հայոց լեզու և գրականություն	10	21	0,48
Օտար լեզուներ և գրականություն	18	31	0,58
Պատմություն և իրավագիտություն	14	22	0,64
Ընդամենը	**42**	**74**	**0,57**
Համահամալսարանական ամբիոններ			
Ռազմական	0	7	0
Ընդամենը	***112***	**234**	**0,48**

[2] Հաշվի են առնված միայն այն աշխատությունները, որտեղ որպես աշխատավայր նշված է Համալսարանը:

Վարչական ստորաբաժանումներ			
Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոն	0	5	0
Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոն	0	2	0
Արտաքին համագործակցության կենտրոն	0	3	0
Որակի ապահովման բաժին	0	2	0
Մինչբուհական կրթության կազմակերպման բաժին	0	13	0
Մարդկային ռեսուրսների կառավարման, փաստաթղթաշրջանառության և իրավական ապահովման բաժին	0	6	0
Ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության բաժին	0	2	0
Ֆինանսական ռեսուրսների կառավարման և հաշվառման բաժին	0	6	0
Տնտեսական գործունեության և ենթակառուցվածքների սպասարկման բաժին	0	4	0
Գրադարան	2	5	0,4
Ընդամենը	2	**48**	**0,04**
Ընդամենը՝	**114**	**282**	**0,39**

Գծապատկեր 5

Աշխատակիցների 2023 թ. գիտահետազոտական գործունեության վերլուծությունն ըստ ստորաբաժանումների



Աղյուսակ 13

Ուսումնառողների 2023թ. գիտահետազոտական գործունեության վերլուծություն

Ֆակուլտետ	Գիտական աշխատությունների թիվ	Ուսանողների թիվ (28.12.2023թ. դրությամբ)	Գիտական աշխատությունների թիվ / Ուսանողների թիվ
Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ	8	489	0,07
Հասարակական գիտությունների ֆակուլտետ	8	865	0,009
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	1	515	0,002
Ռազմական ամբիոն	0	145	0
Հետբուհական կրթական ծրագրեր	6	12	0,5
Ընդամենը՝	**23**	**2026**	**0,011**

Գծապատկեր 6

Ուսումնառողների 2023 թ. գիտահետազոտական գործունեության վերլուծություն



Այսպիսով, կարող ենք փաստել, որ 2023թ.-ին ամենաշատ գիտական աշխատանքները տպագրվել են Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի ՊԴ կազմի ներկայացուցիչների կողմից:

Ստորև ներկայացված Գծապատկեր 7-ում բերված է 2023թ.-ի ընթացքում Համալսարանի ՊԴ կազմի կողմից հրատարակված աշխատանքների և ՊԴ կազմի հարաբերակցությունը.

Գծապատկեր 7

2023թ.-ին Համալսարանի ՊԴ կազմի կողմից հրատարակված աշխատանքների և ՊԴ կազմի հարաբերակցությունը



Մեկ դասախոսին ընկնող գիտական աշխատությունների ցուցանիշը, ինչպես և նախորդ տարիների ընթացքում, 1-ից փոքր չէ միայն Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի համար:

Ստորև ներկայացված Աղյուսակ 14-ում և Գծապատկեր 7-ում բերված են Համալսարանի աշխատակիցների և ուսումնառողների կողմից 2023թ.-ին հրատարակած աշխատությունների քանակը՝ ըստ տորաբաժանումների և վարկանիշավորման սանդղակի:

Աղյուսակ 14

Համալսարանի աշխատակիցների կողմից 2023թ.-ին հրատարակված աշխատությունների քանակը՝ ըստ տորաբաժանումների և վարկանիշավորման սանդղակի[3]

Ամբիոն/ստորաբաժանում	SJR –ի Q1, Q2 քառորդներում ընդգրկված անվագրում հոդված	SJR –ի Q3, Q4 քառորդներում ընդգրկված անվագրում հոդված	Scopus շտեմարանում կամ Web of Science հարթակում ընդգրկված անվագրում հոդված	Cite Score, Index Copernicus գործակից ունեցող անվագրերում հոդված	ՌԴ ԲՈՀ-ի ցուցակում ընդգրկված գիտական անվագրում և ժողովածուում հոդված	ՇՈՀ-ի Գիտական տեղեկագրում հոդված	ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում ընդգրկված գիտական անվագրում և ժողովածուում հոդված	ՊՄՀՍ համակարգում ընդգրկված գիտական անվագրում և ժողովածուում հոդված	Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում հոդված	Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում թեզիս	Միջազգային գրախոսվող անվագրում հոդված	Գրախոսվող ներ մասնագիտական անվագրում հոդված	Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածուում հոդված	Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածուում թեզիս	Գիտամեթոդական/ուսումնամեթոդական/ուսումնագիտական աշխատանք	Մենագրություն	Այլ	Ընդամենը
Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ																		
Մաթեմատիկա, ֆիզիկա և ՏՏ	2	1	1	0	0	4	8	1	6	4	1	0	0	1	0	0	0	**29**
Աշխարհագրություն և սերվիս	0	0	0	0	0	5	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	**5**
Կենսաբանություն և քիմիա	1	0	1	0	0	6	1	0	0	0	0	0	1	0	1	0	0	**11**
Տնտեսագիտություն	0	0	0	0	0	0	0	0	0	0	1	0	1	0	1	0	0	**3**
Ընդամենը՝	**3**	**1**	**2**	**0**	**0**	**15**	**9**	**1**	**6**	**4**	**2**	**0**	**2**	**1**	**2**	**0**	**0**	**48**
Հասարակական գիտությունների ֆակուլտետ																		
Մանկավարժություն	0	0	0	0	0	1	2	1	1	0	0	0	0	0	0	0	0	**5**
Հոգեբանություն և սոցիոլոգիա	0	0	0	0	0	3	6	*1*[4]	4	0	0	3	0	0	0	0	0	**17**
Սպորտ և արվեստ	0	0	0	0	0	1	2	0	1	0	0	0	0	0	0	0	0	**4**
Ընդամենը՝	**0**	**0**	**0**	**0**	**0**	**5**	**10**	***1***	**6**	**0**	**0**	**3**	**0**	**0**	**0**	**0**	**0**	***25***
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ																		
Հայոց լեզու և գրականություն	0	0	0	0	0	2	5	0	1	0	0	0	0	0	0	0	2	**10**
Օտար լեզուներ և գրականություն	0	0	0	0	0	0	4	0	6	0	5	2	1	0	0	0	0	**18**
Պատմություն և իրավագիտություն	0	0	0	0	0	*5*[5]	2	2	3	0	0	1	1	0	0	0	0	**14**
Ընդամենը՝	**0**	**0**	**0**	**0**	**0**	**7**	**11**	**2**	**10**	**0**	**5**	**3**	**2**	**0**	**0**	**0**	**2**	**42**
Ռազմական ամբիոն	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	**0**
Ընդամենը՝	**3**	**1**	**2**	**0**	**0**	***24***	**30**	***4***	**22**	**4**	**7**	**6**	**4**	**1**	**2**	**0**	**2**	***112***

[3] Հաշվի են առնված միայն այն աշխատությունները, որտեղ որպես աշխատավայր նշված է Համալսարանը:

[4] Տվյալ աշխատությունը հաշվված է նաև Մանկավարժության ամբիոնում, ուստի հանված է ընդհանուր աշխատությունների թվից:

[5] Տվյալ աշխատություններից 3-ը հաշվված են նաև Աշխարհագրության և սերվիսի ամբիոնում, ուստի հանված է ընդհանուր աշխատությունների թվից:

Ամբիոն/ստորաբաժանում	SJR –ի Q1, Q2 քառորդներում ընդգրկված անասգրում հոդված	SJR –ի Q3, Q4 քառորդներում ընդգրկված անասգրում հոդված	Scopus շտեմարանում կամ Web of Science հարթակում ընդգրկված անասգրում հոդված	Cite Score, Index Copernicus գրծակից ունեցող անասգիրում հոդված	ԱՀ ԲՈՀ-ի ցուցակում ընդգրկված գիտական անասգրում և ժողովածուում հոդված	ՇՈՀ-ի Գիտական տեղեկագրում հոդված	ՀՀ ԿԳՄՍՆ ԲՈԳԳ-ի կողմից ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում ընդգրկված գիտական անասգրում և ժողովածուում հոդված	ՌԻՍԻՊ հանձնաժողով ընդգրկված գիտական անասգրում և ժողովածուում հոդված	Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում հոդված	Միջազգային գիտական գրքում անասգրում թեզիս	Միջազգային գիտական գրքում անասգրում հոդված	Գրախոսվող ենթ մասնագիտական անասգրում հոդված	Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածուում հոդված	Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածուում թեզիս	Գիտամեթոդական/ուսումնամեթոդական/ ուսումնագիտական աշխատանք	Մենագրություն	Այլ	Ընդամենը
Վարչական ստորաբաժանումներ																		
Գրադարան	0	0	0	0	0	1	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	2
Ընդամենը՝	**0**	**0**	**0**	**0**	**0**	**1**	**1**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**2**

Համալսարանի ուսումնառողների կողմից 2023թ.-ին հրատարակված աշխատությունների քանակը՝ ըստ վարկանիշավորման սանդղակի [6]

Ամբիոն/ստորաբաժանում	SJR –ի Q1, Q2 քառորդներում ընդգրկված ամսագրում հոդված	SJR –ի Q3, Q4 քառորդներում ընդգրկված ամսագրում հոդված	Scopus շտեմարանում կամ Web of Science հարթակում ընդգրկված ամսագրում հոդված	Cite Score, Index Copernicus գրքանկից ունեցող ամսագրերում հոդված	ՌԴ ԲՈՀ-ի ցուցակում ընդգրկված գիտական ամսագրում և ժողովածուում հոդված	ՇՊՀ-ի Գիտական տեղեկագրում հոդված	ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի գիտական հրատարակագրությունների ցուցակում ընդգրկված գիտական ամսագրում և ժողովածուում հոդված	ՐԱՀԿ հանակարգում ընդգրկված գիտական ամսագրում և ժողովածուում հոդված	Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում հոդված	Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում թեզիս	Միջազգային գրահրատարակչի ամսագրում հոդված	Գրահրատարակչի նեղ մասնագիտական ամսագրում հոդված	Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածուում հոդված	Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածուում թեզիս	Գիտամեթոդական/ուսումնամեթոդական/ուսումնագիտական աշխատանք	Մենագրություն	Այլ	Ընդամենը
Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ	0	0	0	0	0	5	0	0	0	0	1	0	2	0	0	0	0	**8**
Հասարակական գիտությունների ֆակուլտետ	0	0	0	0	0	1	0	0	0	0	0	3	4	0	0	0	0	**8**
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	1	0	0	0	0	**1**
Ռազմական ամբիոն	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	**0**
Հետբուհական կրթական ծրագրեր	0	0	0	0	0	2	0	0	1	0	1	0	1	0	1	0	0	**6**
Ընդամենը	**0**	**0**	**0**	**0**	**0**	**8**	**0**	**0**	**1**	**0**	**2**	**3**	**8**	**0**	**1**	**0**	**0**	**23**[7]

[6] Հաշվի են առնված միայն այն աշխատությունները, որտեղ որպես աշխատավայր նշված է Համալսարանը:

[7] Նշված 23 աշխատություններից 12-ը տպագրված են դասախոսների հետ համահեղինակությամբ, ուստի ընդհանուր աշխատությունների թվից դրանք հանված են:

Գծապատկեր 8

2023թ.-ին հրատարակած աշխատությունների քանակը՝ ըստ վարկանիշավորման սանդղակի



2023թ.-ին Համալսարանի ՊԴ կազմի կողմից հրատարակվել են գիտական աշխատություններ, որոնց մեծ մասը (շուրջ 50%) կա՛մ ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում ընդգրկված ամսագրերում տպագրված հոդված է, կա՛մ ՇՊՀ Գիտական տեղեկագրում հոդված:

Գծապատկեր 9

2021-2023թթ.-ին աշխատակիցների կողմից հրատարակած աշխատությունների քանակը՝ ըստ վարկանիշավորման սանդղակի



Գծապատկեր 10

2021-2023թթ.-ին աշխատակիցների կողմից հրատարակած աշխատությունների քանակ



2023թ.-ի ցածր ցուցանիշը պայմանավորված է այն հանգամանքով, որ ի տարբերություն նախորդ տարիների, հաշվի են առնվել միայն այն աշխատանքները, որտեղ հեղինակի տվյալների մեջ առկա է Համալսարանի անունը:

Ստորև ներկայացնենք նաև մեկ դասախոսին ընկնող աշխատությունների թիվը վերջին 3 տարիների կտրվածքով:

Աղյուսակ 15

2021-2023թթ. մեկ դասախոսին ընկնող աշխատությունների թիվը

Տարի	Աշխատությունների քանակ	ՊԴ կազմի քանակ	Մեկ դասախոսին ընկնող գիտական աշխատությունների թիվ
2021	130	250	0.52
2022	156	247	0,63
2023	112	234	0,47

Ներկայացնենք նաև օտարերկրյա գործընկերների հետ համահեղինակությամբ տպագրված աշխատությունների թիվը վերջին 3 տարիների կտրվածքով:

Աղյուսակ 16

2021-2023թթ. օտարերկրյա գործընկերների հետ համահեղինակությամբ տպագրված աշխատությունների թիվը

Տարի	Աշխատությունների քանակ	Օտարերկրյա գործընկերների հետ համահեղինակությամբ տպագրված աշխատությունների քանակ	Օտարերկրյա գործընկերների հետ համահեղինակությամբ տպագրված աշխատությունների հաշվեկշիռը %
2021	130	5	3.84
2022	154	1	0.65
2023	114	4	3.5

Նշենք, որ 2021թ.-ի ցուցանիշը պայմանավորված է Համալսարանում կազմակերպված միջազգային գիտաժողովով: Աղյուսակ 15-ում բերված ցածր ցուցանիշները վկայում է այն մասին, որ Համալսարանը պասիվ է համագործակցում

օտարերկրյա կառույցների և բուհերի հետ՝ չնայած այն հանգամանքին, որ վերջին 5 տարիների կտրվածքով առկա է օտարերկրյա կառույցների և բուհերի հետ շուրջ 25 կնքված պայմանագրեր/հուշագրեր, որտեղ առկա է նաև գիտահետազոտական գործունեության ուղղությամբ համագործակցության կետ:

Կառույցի անվանումը	Համատեղ տպագրված գիտական հոդվածները	Համատեղ կազմակերպված գիտական միջոցառումները
Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Ն.Ն. Սիմյոնովի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ («ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ՀՀՌՀ -2018» միջազգային մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված ծրագրի շրջանակում)	1 http://shsu.am/media/journal/2019n1a/2.pdf	
Шадринский государственный педагогический институт		1 IV Международные педагогические и гуманитарные научные чтения, посвященные 200-летию А.Н. Островского
Qeshm Voltage Electric and Electronics Company		
SRM University AP		
Manipal University Jaipur, India		
Piidagogische Hochschule Klirnten / Viktor Frankl Hochschule (PHK), University College of Teacher Education (UCTE)		
ФГБОУ Астраханский государственный университет		
Волгоградский государственный медицинский университет		
Ростовский государственный экономический университет (РИНХ)		
Российский центр науки и культуры в г. Гюмри		
Курский государственный медицинский университет	1 http://shsu.am/media/journal/2022n1b/9.pdf	1 II международная научно-практическая конференция «Цифровая трансформация образования:

		современное состояние и перспективы»
Витебский государственный университет имени П. М. Машерова		
МИРЭА- Российский технологический университет		
Полесский государственный университет		
Тверской государственный университет		
Тюменский государственный университет		
Чеченский государственный педагогический университет		
Գավառի պետական համալսարան		
Կանանց իրավունքների տուն		
ԲԻՕՆ ԲԻԶՆԵՍ ԱԿԱԴԵՄԻԱ		
Գորիսի պետական համալսարան		
Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ		
Հանրային կառավարման զարգացման, ռազմավարական հետազոտությունների և վերապատրաստման կենտրոն		
«Փոլիսինեթ» գիտահետազոտական կենտրոն		
Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան		
Ընտրական համակարգերի միջազգային հաստատության հայաստանյան գրասենյակ («Այ էֆ Ի էս հայաստանյան մասնաճյուղ)		

Հավելենք, որ Աղյուսակ 16-ում ներկայացված ցուցանիշը հնարավոր կլիներ բարելավել նաև միջազգային գիտաժողովներին առավել ակտիվ մասնակցության, համագործակցության նոր եզրեր գտնելու պարագայում: Այդ տեսանկյունից Կենտրոնի կողմից ինչպես Համալսարանի պաշտոնական կայքի, այնպես էլ աշխատակիցների անձնական էլեկտրոնային փոստերի հասցեներին ուղարկվում են միջազգային գիտաժողովների հայտարարություններ: Այդ տվյալները 2019-2020 ուստարվանից մինչև 2022-2023 ուստարի ներկայացված են ստորև բերված Գծապատկեր 11-ում: Սակայն պետք է նշել, որ նույնիսկ կիրառված այս մեխանիզմների դեպքում արդյունքները գոհացուցիչ չեն:

Գծապատկեր 11

Կենտրոնի կողմից 2020-2021 -2022-2023 ուստարիներին տարածված գիտաժողովների հայտարարությունների քանակ



Այստեղ պետք է նշենք, որ 2023թ.-ի ընթացքում Համալսարանի կողմից չի կազմակերպվել միջազգային կամ հանրապետական գիտաժողով, որի պատճառը թերևս իրականացվող կառուցվածքային փոփոխություններն էին: Սակայն այժմ Կենտրոնի կողմից նախապատրաստական աշխատանքներ են տարվում 2024թ.-ի աշնանը միջազգային գիտաժողով կազմակերպելու ուղղությամբ՝ նվիրված Համալսարանի 90-ամյակին: Արդեն կազմվել է գիտաժողովի հայտարարությունը և առաջիկայում այն կտարածվի ինչպես Համալսարանում, այնպես էլ ՀՀ այլ բուհերի և արտասահմանյան գործընկեր համալսարանների շրջանակներում:

Ամփոփելով, պետք է փաստել, որ աշխատանքները հիմնականում տպագրվում են նույն անձանց կողմից: Նաև առկա է այն հանգամանքը, որ գիտական աստիճան և/կամ կոչում ստանալուց հետո դասախոսները դադարում են զբաղվել գիտահետազոտական գործունեությամբ:

Աղյուսակ 17

2021-2023թթ. աշխատություն չներկայացրած ՊԴ կազմի ներկայացուցիչների թիվը

Տարի	ՊԴ կազմի քանակ	Աշխատություն չներկայացրած ՊԴ կազմի ներկայացուցիչների քանակ	Աշխատություն չներկայացրած ՊԴ կազմի ներկայացուցիչների հաշվեկշիռը %
2021	250	192	76.8
2022	247	187	75,7
2023	234	178	76

Խնդիրներ	Լուծումներ
Ուսումնառություն-հետազոտություն կապի թույլ դրսևորում:	Ուսումնառություն-հետազոտություն կապն ամրապնդելու նպատակով Համալսարանի աշխատակիցների և ուսանողների կողմից իրականացվող գիտահետազոտական գործունեության համար լրավճարի տրամադրման կարգում ավելացվել է կետ, որի համաձայն Համալսարանի աշխատակից հանդիսացող հեղինակ(ներ)ի կողմից տպագրված աշխատանքները ամբիոնների կողմից կազմակերպվող գիտական սեմինարների ընթացքում ներկայացնելու դեպքում կտրամադրվի լրավճար:
Ուսանողների՝ գիտահետազոտական գործունեության մեջ թույլ ընդգրկվածություն:	Ուսանողների կողմից գիտահետազոտական գործունեության իրականացումը խթանելու նպատակով, Համալսարանի աշխատակիցների և ուսումնառողների կողմից իրականացվող գիտահետազոտական գործունեության համար լրավճարի տրամադրման կարգի համաձայն, 1-ին անգամ խրախուսական վճար սահմանվել է նաև ուսանողների կողմից հրատարակված աշխատանքների համար:
Գիտահետազոտական գործունեության արդյունքների միջազգայնացման ոչ բավարար ցուցանիշ:	Համալսարանում իրականացվող գիտահետազոտական գործունեության միջազգայնացմանը նպաստելու նպատակով՝ լրավճարի տրամադրման սանդղակում ավելացվել են նոր կետեր՝ բավական բարձր լրավճարի չափով. SJR-ի Q1, Q2 քառորդներում ընդգրկված ամսագրում հոդված-150.000 ՀՀ դրամ SJR-իQ3, Q4 քառորդներում ընդգրկված ամսագրում հոդված-125.000 ՀՀ դրամ Scopus շտեմարանում կամ Web of Science հարթակում ընդգրկված ամսագրում հոդված-100.000 ՀՀ դրամ և այլն
Համալսարանում ամրագրված գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների զարգացման ապահովում:	Համալսարանում ամրագրված գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների ուղղությամբ զարգացում ապահովելու նպատակով Համալսարանի աշխատակիցների և ուսանողների կողմից իրականացվող գիտահետազոտական գործունեության համար լրավճարի տրամադրման կարգում ավելացվել է կետ, որի համաձայն այդ ուղղություններով տպագրված աշխատանքների պարագայում տրամադրվող լրավճարի չափի համար կգործի տարբերակված գործակից:
Գրագողության բացահայտված դեպքերի հետ կապված լրավճար տրամադրելու ընթացակարգի բացակայություն:	Համալսարանի աշխատակիցների և ուսանողների կողմից իրականացվող գիտահետազոտական գործունեության համար լրավճարի տրամադրման կարգում ավելացվել է նոր կետ (2.13), որի համաձայն կարգավորվում է նշված խնդիրը:

3.3 ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ 2023Թ.-ԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԼՐԱՎՃԱՐ

Համալսարանի աշխատակիցների կողմից ծավալվող գիտահետազոտական գործունեության խթանման նպատակով 2014թ.-ին առաջին անգամ մշակվել և գործարկվել, իսկ այնուհետև 2019, 2021, 2022թթ.-ին լրամշակվել է Համալսարանի աշխատակիցների գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման ընթացակարգը: Վերջինիս կիրարկման արդյունքում 2022թ.-ին Համալսարանի աշխատակիցների կողմից հրատարակված աշխատությունների, ինչպես նաև կատարված գրախոսումների համար 2023թ.-ին տրամադրված լրավճարները ներկայացված են Աղյուսակ 18-ում:

Աղյուսակ 18

2022թ.-ին Համալսարանի աշխատակիցների կողմից հրատարակված աշխատությունների, գրախոսումների համար 2023թ.-ին տրամադրված լրավճար

Ստորաբաժանում	Տրամադրված լրավճարի չափ /ՀՀ դրամ/
Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ	
Մաթեմատիկա, ֆիզիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ	945.900
Աշխարհագրություն և սերվիս	229.100
Կենսաբանություն և քիմիա	94.560
Տնտեսագիտություն	42.000
Ընդամենը	**1.311.560**
Հասարակական գիտությունների ֆակուլտետ	
Մանկավարժություն	108.900
Հոգեբանություն և սոցիոլոգիա	165.000
Սպորտ և արվեստ	76.000
Ընդամենը	**349.900**
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	
Հայոց լեզու և գրականություն	159.000
Օտար լեզուներ և գրականություն	612.500
Պատմություն և իրավագիտություն	360.000
Ընդամենը	**1.131.500**
Համահամալսարանական ամբիոններ	
Ռազմական	0
Վարչական ստորաբաժանումներ	
Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոն	0
Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոն	0
Արտաքին համագործակցության կենտրոն	0
Որակի ապահովման բաժին	0
Մինչբուհական կրթության կազմակերպման բաժին	0
Մարդկային ռեսուրսների կառավարման, փաստաթղթաշրջանառության և իրավական ապահովման բաժին	0

Ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության բաժին	0
Ֆինանսական ռեսուրսների կառավարման և հաշվառման բաժին	0
Տնտեսական գործունեության և ենթակառուցվածքների սպասարկման բաժին	0
Գրադարան	0
Ընդամենը	**0**
Ընդամենը՝	**2.792.960**

Կիրառվող այս խթանման մեխանիզմի արդյունավետությունը տեսանելի դարձնելու նպատակով ստորև ներկայացված Գծապատկեր 12-ում բերված է վերջին 5 տարիներին Համալսարանի աշխատակիցների կողմից ծավալած գիտահետազոտական գործունեության համար տրամադրված լրավճարների տվյալները:

Գծապատկեր 12

Համալսարանի աշխատակիցների կողմից հրատարակված աշխատությունների, գրախոսումների համար 2021-2023թթ.-ին տրամադրված լրավճարներ



Ինչպես նշվել է սույն Հաշվետվության 2-րդ բաժնում, 2023թ.-ին ծավալած գիտահետազոտական գործունեության համար 2024թ.-ի հունվար ամսին լրավճար կտրամադրվի ինչպես Համալսարանի աշխատակիցներին, այնպես էլ ուսումնառողներին՝ ըստ Համալսարանի աշխատակիցների և ուսանողների կողմից իրականացվող գիտահետազոտական գործունեության համար լրավճարի տրամադրման լավարկված կարգի:

3.4 2023Թ.-ԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

3.4.1 ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

Համալսարանի աշխատակիցների և ուսանողների կողմից ծավալվող գիտահետազոտական գործունեության խթանման նպատակով 2016թ.-ին առաջին անգամ մշակվել և գործարկվել, իսկ այնուհետև 2018, 2019, 2021, 2022թթ.-ին լրամշակվել է Համալսարանի գիտական գործունեության համար ներքուհական դրամաշնորհի տրամադրման կարգը:

Գիտահետազոտական գործունեության համար ներքուհական դրամաշնորհի տրամադրման մրցույթի 2022թ.-ին տրված հայտարարությանը համապատասխան՝ Համալսարանի աշխատակիցների և ուսանողների կողմից ներկայացվել է 3 հայտ, որոնք ներկայացված են Աղյուսակ 19-ում:

Աղյուսակ 19

Գիտահետազոտական գործունեության համար ներքուհական դրամաշնորհի տրամադրման մրցույթի 2022թ.-ին ներկայացված հայտեր

№	Ամբիոն	Խմբի անդամներ	Թեմա
1.	Օտար լեզուներ և գրականություն	Հովհաննիսյան Անահիտ (ղեկավար) Իսահակյան Հեղինե Տոնոյան Լուսինե Գալստյան Սյուզաննա (ուսանողուհի)	Բանավոր թարգմանության հարցերը հայախոս լսարանում
2.	Մաթեմատիկա, ֆիզիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ	Սարգսյան Արմենուհի (ղեկավար) Ժամակոչյան Քնարիկ Վարդանյան Սոնա Ադամյան Հասմիկ (ուսանողուհի) Մինասյան Նունե (ուսանողուհի)	Մաթեմատիկական անալիզի որոշ բաժինների արդյունավետ դասավանդումը ավագ դպրոցում և բուհում՝ Mathematica փաթեթի հնարավորությունների կիրառմամբ
3.	Մաթեմատիկա, ֆիզիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ	Նիկողոսյան Հրաչիկ (ղեկավար) Մովսիսյան Անի Հայրապետյան Ֆլորա (ուսանողուհի) Նիկողոսյան Գոռ (խորհրդատու)	Շրջելի երևույթները և ռելաքսային պրոցեսները կիսահաղորդչային նանոհետերոհամակարգերի զնդաձև և սկավառակաձև կլաստերներում

Տեխնիկական ստուգման, արտաքին փորձաքննության և ներբուհական խորհրդի կողմից իրականացված գնահատման արդյունքում ներկայացված 3 հայտերից հետևյալ 1 հայտը Համալսարանի ռեկտորի հրամանով 30.06.2023թ.-ից հաստատվել է ֆինանսավորման, որի մասին տեղեկատվությունը տեղադրվել է Համալսարանի պաշտոնական կայքում:

Աղյուսակ 20

Գիտահետազոտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման մրցույթի 2022թ.-ին ներկայացված հայտերից 2023թ.-ին ֆինանսավորված թեմա

№	Ամբիոն	Խմբի անդամներ	Թեմա	Իրականացման տարիներ
1.	Օտար լեզուներ և գրականություն	Հովհաննիսյան Անահիտ (ղեկավար) Իսահակյան Հեղինե Տոնոյան Լուսինե Գալստյան Սյուզաննա (ուսանողուհի)	Բանավոր թարգմանության հարցերը հայախոս լսարանում	2023-2025

Հատկանշական և կարևոր է այն հանգամանքը, որ 2023թ.-ին ֆինանսավորված թեման բանասիրական գիտությունների բնագավառի թեմա է, իսկ մինչ այժմ ներբուհական դրամաշնորհի շրջանակում ֆինանսավորված բոլոր թեմաները եղել են բնական գիտությունների, ինչպես նաև մանկավարժական գիտությունների բնագավառներից: Այս հանգամանքը կարևոր է Համալսարանի 2023-2027թթ. Զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման տեսանկյունից, քանի որ ապահովում է գիտահետազոտական գործունեության մեջ առավել մեծ թվով ՊԴ կազմի ներկայացուցիչների և ուսանողների ներգրավվածություն:

Վերոնշյալ թեմայի շրջանակում, օրացուցային պլանին համապատասխան, իրականացված գիտահետազոտական աշխատանքների վերաբերյալ 1-ին ընթացիկ հաշվետվությունը խմբի կողմից ներկայացվել է 2024թ.-ի հունվարին:

Բացի վերոնշյալից 2023թ.-ին իրենց օրացուցային պլաններին համապատասխան իրականացվել են նաև 01.06.2022թ.-ից ներբուհական դրամաշնորհի շրջանակում ֆինանսավորված ներքոնշյալ 2 թեմաները:

Աղյուսակ 21

Գիտահետազոտական գործունեության համար տրամադրվող ներբուհական դրամաշնորհի շրջանակում 2023թ.-ից իրականացվող թեմաներ

№	Ամբիոն	Խմբի անդամներ	Թեմա	Իրականացման տարիներ
1.	Աշխարհագրություն և սերվիս	Մարտիրոսյան Լևոն (ղեկավար) Սարգսյան Ռուդոլֆ Աբրահամյան Վարդիթեր	Արագածոտնի մարզի տարածքային-ռեկրեացիոն ներուժը և զբոսաշրջային ռեսուրսների գնահատումը	2022-2024

		Գրիգորյան Լիանա (ուսանողուհի)		
2.	Մաթեմատիկա, ֆիզիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ	Մանուկյան Վարդան (ղեկավար) Նիկողոսյան Գագիկ Սարգսյան Սամվել (խորհրդատու) Շահբազյան Անի (հայցորդ)	Մաթեմատիկական և ֆիզիկական տրամաբանական, որակական, դիվերգենտ խնդիրները որպես ուսուցման արդյունավետության բարձրացման միջոց	2022-2024

Վերոնշյալ թեմաների շրջանակում, օրացուցային պլաններին համապատասխան, իրականացված գիտահետազոտական աշխատանքների վերաբերյալ խմբի կողմից ներկայացվել են 3 ընթացիկ հաշվետվություններ, որոնք քննարկվել են փորձագիտական խորհուրդներում և գնահատվել դրական: Նշված հաշվետվությունները, ինչպես նաև թեմաների շրջանակում տպագրված աշխատությունները, տեղադրված են Համալսարանի պաշտոնական կայքում:

Ստորև ներկայացված Աղյուսակ 22-ում բերված են գիտահետազոտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի շրջանակներում իրականացված թեմաների վերաբերյալ որոշակի տեղեկատվություն վերջին 5 տարիների կտրվածքով:

Աղյուսակ 22

Գիտահետազոտական գործունեության զարգացման նպատակով տրամադրվող ներբուհական դրամաշնորհի մրցույթի արդյունքներ՝ ըստ տարիների

Տարի	Մրցույթին ներկայացված հայտերի քանակ	Ֆինանսավորված թեմաների քանակ	Թեման իրականացնող խմբում աշխատակիցների թվաքանակ	Թեման իրականացնող խմբում ուսանողների թվաքանակ	Թեմայի շրջանակում տպագրված աշխատանքների քանակ	Թեմայի շրջանակում պատրաստված ավարտական աշխատանքների և/կամ մագիստրական թեզերի քանակ
2019	3	1	3	2	5	1
2020	6	1	3	1	19	3
2021	3	0	-	-	-	-
2022	3	2	6	2	5	4
2023	3	1	3	1	1	-

Հարկավոր է նշել, որ գիտահետազոտական գործունեության համար տրամադրվող ներբուհական դրամաշնորհների շրջանակներում իրականացվող թեմաներում ուսանողների պարտադիր ներգրավվածության պայմանը նպաստում է վերջիններիս գիտահետազոտական գործունեությամբ զբաղվելուն՝ միաժամանակ ապահովելով նրանց կողմից տպագրված հոդվածների թվաքանակի աճ: Ստորև ներկայացված Աղյուսակ 23-ում բերված են 2019-2023թթ.-ին իրականացված թեմաներում ներգրավված ուսանողների համահեղինակությամբ տպագրված հոդվածների քանակը:

Աղյուսակ 23

Գիտահետազոտական գործունեության համար տրամադրված ներբուհական դրամաշնորհի շրջանակներում 2019-2023թթ.-ին իրականացված թեմաներում ներգրավված ուսանողների համահեղինակությամբ տպագրված հոդվածների քանակ

	Ուսանողների քանակ	Ուսանողների համահեղինակությամբ տպագրված հոդվածների քանակ
2019	4	3
2020	3	2
2021	2	3
2022	3	0
2023	3	4

Ինչպես արդեն նշվել էր սույն Հաշվետվության 2-րդ բաժնում, Համալսարանում 2023-2027թթ. գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների ուղղությամբ զարգացում ապահովելու, հստակ տարբերակված երկարաժամկետ, միջնաժամկետ/կարճաժամկետ հետազոտական ծրագրեր մշակելու և իրականացնելու, Համալսարանում իրականացվող գիտահետազոտական գործունեության արդյունքները միջազգայնացնելու, ուսումնառություն-հետազոտություն կապն առավել ամուր դարձնելու նպատակով Համալսարանի գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգի լավարկման արդյունքում մշակվել և 24.11.2023թ.-ի Գիտական խորհրդում հաստատվել են 2 նոր կարգեր՝ Համալսարանի աշխատակիցներին և ուսանողներին գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների ուղղությամբ ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգ, Համալսարանի աշխատակիցներին և ուսանողներին գիտահետազոտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգ: 2023թ.-ի դեկտեմբերին նշված 2 կարգերին համապատասխան ներբուհական դրամաշնորհների հայտարարությունները տրված են, որոնց համաձայն հայտերի ներկայացման վերջնաժամկետ էր սահմանվել 2024թ.-ի հունվարի 18-ը:

3.4.2 ՀՀ ԲԿԳԿ-Ի ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

Համալսարանում 2023թ.-ի ընթացքում ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ֆինանսավորվող 3 գիտահետազոտական թեմաներ են իրականացվել, որոնցից 2-ը պայմանագրային (թեմատիկ), իսկ 1-ը՝ բազային, ընդ որում բոլորը՝ Մաթեմատիկա, ֆիզիկա և ՏՏ ամբիոնի ՊԴ կազմի կողմից:

Աղյուսակ 24

ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից 2023թ.-ին ֆինանսավորված գիտահետազոտական թեմաներ

№	Ամբիոն	Խմբի անդամներ	Թեմա	Իրականացման տարիներ
1.	Մաթեմատիկա, ֆիզիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ	Մանուկյան Վարդան Սերոբյան Երվանդ Նիկողոսյան Գագիկ Նազարյան Նունե	Ֆիզիկայի և մաթեմատիկայի միջառարկայական հիմնարար կապերի և առարկայական մեթոդների վեր հանումը որպես ուսուցման արդյունավետության բարձրացման միջոց	2021-2024
2.	Մաթեմատիկա, ֆիզիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ	Սարգսյան Արմենուհի Սարգսյան Սամվել Ժամակոչյան Քնարիկ Խաչատրյան Մելինե	Մաթեմատիկական և ֆիզիկական տրամաբանական, որակական, դիվերգենտ խնդիրները որպես ուսուցման արդյունավետության բարձրացման միջոց	2021-2024
3.	Մաթեմատիկա, ֆիզիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ	Սարգսյան Սամվել Սարգսյան Արմենուհի Ժամակոչյան Քնարիկ	Նանո և միկրոտեխնիկայի նյութերի և կառուցվածքների մեխանիկայի պրոբլեմային լաբորատորիայի ենթակառուցվածքի պահպանում և զարգացում (բազային)	2023

Ստորև ներկայացված Աղյուսակ 25-ում բերված է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ֆինանսավորված գիտահետազոտական թեմաների վերաբերյալ որոշակի տեղեկատվություն վերջին 5 տարիների կտրվածքով.

Աղյուսակ 25

ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի պայմանագրային (թեմատիկ) և բազային ֆինանսավորմամբ դրամաշնորհային մրցույթների արդյունքներ՝ ըստ տարիների

Տարի	Մրցույթների արդյունքներն՝ ըստ տարիների	Որից		Թեման իրականացնող խմբում աշխատակիցների թվաքանակ	Թեմայի շրջանակում տպագրված աշխատանքների թվաքանակ
		պայմանագրային (թեմատիկ)	բազային		
2019	1	-	1	3	5
2020	1	-	1	3	12
2021	3	2	1	8	5
2022	1	-	1	3	9
2023	1	-	1	3	8

Այստեղ մտահոգիչ է այն հանգամանքը, որ թեմաներն իրականացնող խմբերում ներառված չեն ուսանողներ, ինչի հետևանքով չկան նաև թեմաների շրջանակում իրականացված ավարտական աշխատանքներ կամ մագիստրոսական թեզեր: Մտահոգիչ է նաև այն հանգամանքը, որ ներկայացված բոլոր թեմաներն իրականացվել են բացառապես Մաթեմատիկա, ֆիզիկա և ՏՏ ամբիոնի ՊԴ կազմի ներկայացուցիչների կողմից:

Ստորև ներկայացված Աղյուսակ 26-ում բերված են ինչպես գիտահետազոտական գործունեության համար տրամադրվող ներբուհական դրամաշնորհների շրջանակում իրականացվող, այնպես էլ ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ֆինանսավորվող գիտահետազոտական թեմաներում ներգրավված Համալսարանի ՊԴ կազմի հաշվեկշիռը՝ վերջին 5 տարիների կտրվածքով:

Աղյուսակ 26

Գիտահետազոտական թեմաներում 2019-2023թթ.-ին ներգրավված Համալսարանի աշխատակիցների հաշվեկշիռը

Տարի	Գիտահետազոտական թեմաներում ներգրավված ՊԴ կազմ	ՊԴ կազմի քանակ	Գիտահետազոտական թեմաներում ներգրավված ՊԴ կազմի ներկայացուցիչների հաշվեկշիռը %
2019	14	255	5,5
2020	14	264	5,3
2021	13	250	5,2
2022	12	247	4,9
2023	14	234	6

Նշենք, որ 2023թ.-ի սեպտեմբերից Համալսարանի պաշտոնական կայքի՝ Կենտրոնին հատկացված բաժնում ավելացել է նոր ընտրացանկ՝ Հետազոտություն, որտեղ առանձին ներկայացված է ինչպես գիտահետազոտական գործունեության համար տրամադրվող ներբուհական դրամաշնորհների շրջանակում իրականացվող, այնպես էլ ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ֆինանսավորվող գիտահետազոտական թեմաների վերաբերյալ մասնրամասն և համակարգված տեղեկատվություն:

Նշենք, որ ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման մրցույթի արդյունքներով ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Սարգսյանը մշտապես ընդգրկվել է առավել բարձր արդյունավետությամբ աշխատող մինչև 100 գիտաշխատողների ցուցակում:

Խնդիրներ	Լուծումներ
Համալսարանում իրականացվող գիտահետազոտական հետազոտությունների կարճաժամկետ, միջնաժամկետ, երկարաժամկետ պլանավորումների բացակայություն:	Գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների ուղղությամբ տրամադրվող դրամաշնորհ է ներդրվել որպես երկարաժամկետ՝ 24 կամ 36 ամիս ժամկետով, իսկ գիտահետազոտական գործունեության բոլոր ուղղություններով տրամադրվող դրամաշնորհը՝ միջնաժամկետ կամ կարճաժամկետ՝ 24 կամ 12 ամիս ժամկետով:
Համալսարանի փոքր թվով աշխատակիցների և ուսանողների ներգրավվածություն գիտահետազոտական թեմաներում	Համալսարանի առավել մեծ թվով աշխատակիցների և ուսանողների ներգրավվածությունը գիտահետազոտական գործունեության համար տրամադրվող դրամաշնորհներում ապահովելու ակնկալիքով՝ գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների ուղղությամբ տրամադրվող դրամաշնորհում ավելացվել է հայտը ներկայացնող խմբի անդամների թույլատրելի թիվը, ինչպես նաև հնարավորություն է տրվել թեմայի իրականացման ընթացքում խմբում կատարել փոփոխություններ՝ ներգրավելով նոր անձանց:
Ուսումնառություն-հետազոտություն կապի թույլ դրսևորում:	Կարգերում հստակեցվել են թեմաների շրջանակներում իրականացվող հետազոտություններից ակնկալվող արդյունքները՝ ներառելով ուսումնառություն-հետազոտություն կապն ապահովող պարտադիր և ցանկալի արդյունքներ: Մասնավորապես, ➢ Հետազոտության արդյունքները պետք է ամփոփվեն առնվազն 30 էջ (A4 ձևաչափի) ծավալով գիտամեթոդական/ ուսումնագիտական/ ուսումնամեթոդական աշխատանքում, որը պետք է ներկայացված լինի ա) մասնագիտական ամբիոնի կողմից նախատեսված գիտական սեմինարների ընթացքում պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում, բ) 6-ժամյա ոչ ֆորմալ դասընթացի տեսքով տվյալ և/կամ հարակից մասնագիտություններում սովորող ուսանողների շրջանում: ➢ Մինչ թեմայի ավարտը ցանկալի է առնվազն 1 ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի կատարումը՝ թեմայի շրջանակում իրականացվող հետազոտության հենքի վրա: ➢ Ամփոփիչ հաշվետվությունը ներկայացնելիս ցանկալի է բարելավման նպատակով ուսումնական գործընթացում հետազոտության արդյունքների ներդրումը տվյալ և/կամ հարակից մասնագիտությունների համապատասխան դասընթաց(ներ)ի թեմատիկ օրացուցային պլաններում (ԹՕՊ) համապատասխան բաժինների/թեմաների լավարկմամբ (ամբիոնի նիստի համապատասխան որոշմամբ):

Գիտահետազոտական գործունեության արդյունքների միջազգայնացման ոչ բավարար ցուցանիշ:	Գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների զարգացումն ապահովելու նպատակով՝ թեմաների շրջանակում իրականացվող հետազոտություններից ակնկալվող արդյունքներն առավել խիստ են միջազգայնացման տեսանկյունից: Մասնավորապես, հետազոտության արդյունքները պետք է հրատարակվեն 24-ամսյա ֆինանսավորման դեպքում՝ առնվազն 8, 36-ամսյա ֆինանսավորման դեպքում՝ առնվազն 12 գիտական/գիտամեթոդական հոդվածներում, որոնցից 24-ամսյա ֆինանսավորման դեպքում՝ առնվազն 1-ը, 36- ամսյա ֆինանսավորման դեպքում՝ առնվազն 2-ը SJR-ի Q1, Q2, Q3, Q4 քառորդներում, Scopus շտեմարանում կամ Web of Science հարթակում ընդգրկված ամսագրերում, իսկ մյուսները՝ ՌԴ ԲՈՀ-ի, ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում ընդգրկված գիտական ամսագրերում:

3.5 ՇՊՀ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՇՊՀ Գիտական տեղեկագիրը հիմնադրվել է Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի Գիտական խորհրդի կողմից 2011թ.-ին: Առաջին համարը հրատարակվել է 2013թ.-ին: Առաջին տարում լույս է տեսել տեղեկագրի 2 համար՝ Ա (Մաթեմատիկական, բնագիտական, տեխնիկական գիտություններ, տնտեսագիտություն և աշխարհագրություն) և Բ (Հումանիտար ու հասարակական գիտություններ, դասավանդման մեթոդիկաներ) պրակներով, այնուհետև ՀՀ ԲՈՀ-ի պահանջով՝ 1 համար՝ կրկին Ա և Բ պրակներով: Սակայն 2019թ.-ից սկսած նույն ՀՀ ԲՈԿ-ի պահանջով լույս է տեսնում տեղեկագրի 2 համար՝ կրկին Ա (Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ, Կենսաբանական գիտություններ (գյուղատնտեսություն), Գիտություններ Երկրի մասին, Տեխնիկական գիտություններ, Տնտեսագիտություն) և Բ (Պատմական գիտություններ, Բանասիրական գիտություններ, Մանկավարժական գիտություններ (այդ թվում՝ դասավանդման մեթոդիկաներ), Հոգեբանական գիտություններ, Արվեստագիտություն) պրակներով: Այն ընդգրկված է պարբերականների միջազգային ստանդարտ համարակալման (ISSN էլեկտրոնային տարբերակ՝ 2738-2559, տպագիր տարբերակ՝ 1829-3808) համակարգում, CROSSREF միջազգային մատենագիտական տեղեկատու համակարգում, ինչպես նաև պարբերականում ընդգրկված հոդվածները 2021 թ.-ից օժտված են օբյեկտի թվային նույնականացման համարանիշով (DOI 10.54151/27382559):

ՇՊՀ Գիտական տեղեկագրում 2022թ.-ից հոդվածներ կարող են ներկայացվել միայն հետևյալ ուղղություններով.

- Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ
- Կենսաբանական գիտություններ (գյուղատնտեսություն)
- Գիտություններ Երկրի մասին
- Տեխնիկական գիտություններ
- Տնտեսագիտություն
- Պատմական գիտություններ
- Բանասիրական գիտություններ
- Մանկավարժական գիտություններ (այդ թվում՝ դասավանդման մեթոդիկաներ)
- Հոգեբանական գիտություններ
- Արվեստագիտություն

Նշված բոլոր ուղղություններով մասնագետներ ներառված են նաև ՇՊՀ Գիտական տեղեկագրի խմբագրական խորհրդի՝ Գիտական խորհրդի կողմից հաստատված նոր կազմում:

Պարբերականը մշտապես (բացառությամբ 2022թ.-ի Բ պրակի) ընդգրկված է եղել ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում: ՇՊՀ Գիտական տեղեկագիրը ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում 2023թ.-ին ընդգրկելու նպատակով, ըստ ՀՀ ԲԿԳԿ-ի

համապատասխան գրության, 2022թ.-ի դեկտեմբերին պատրաստվել և ներկայացվել էին անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը: Արդյունքում ՇՊՀ Գիտական տեղեկագրի Ա և Բ պրակները ընդգրկվեցին ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի գիտական հրատարակությունների 2023թ.-ի ցուցակում:

ՇՊՀ Գիտական տեղեկագիրը (պրակ Ա) միջազգայնացնելու ճանապարհին կարևոր քայլ է կատարվել: Ողջ 2023թ.-ի ընթացքում տարվել են հետևողական աշխատանքներ ՇՊՀ Գիտական տեղեկագրի Ա պրակը РИНЦ համակարգում ներառելու ուղղությամբ՝ անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթների ներկայացում, մի շարք տվյալների առցանց լրացում (եռալեզու): Արդյունքում 2023թ. սեպտեմբերից այն գրանցված է գիտական հրատարակությունների տվյալների բազա հանդիսացող eLibrary գիտական էլեկտրոնային գրադարանում, որը ամսագիրը РИНЦ համակարգում ներառելու ճանապարհին գլխավոր քայլն է: Գիտական էլեկտրոնային գրադարանի հետ պայմանագիրը կնքված է և այժմ շարունակվում են անհրաժեշտ աշխատանքներ՝ ամսագիրը РИНЦ համակարգում ներառելու ուղղությամբ (հիմքերը՝ Կենտրոնում):

2020թ.-ին մշակվել, իսկ այնուհետև 2022թ.-ին լրամշակվել և հաստատվել է «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Գիտական տեղեկագրի հրատարակման ընթացակարգը նոր խմբագրությամբ՝ որտեղ արդեն ներառվել են ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում ընդգրկվելու՝ 2023թ.-ից ուժի մեջ մտնող չափանիշները: Հավելենք, որ Կենտրոնի կողմից արդեն լրամշակվել և 2023թ.-ի դեկտեմբերին Գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացվել ընթացակարգի լավարկված տարբերակը՝ կազմված 6 բաժիններից՝ ընդհանուր դրույթներ, գիտական հոդվածների ներկայացում, գիտական հոդվածների գրախոսում, խմբագրական խորհրդի աշխատանքը, համալսարանի գիտական տեղեկագրի հրատարակում, եզրափակիչ դրույթներ: Նշված ընթացակարգը ապահովում է ՇՊՀ Գիտական տեղեկագրում հոդվածների համակարգված ներկայացումը, գրախոսումը, հրատարակումը:

ՇՊՀ Գիտական տեղեկագրի 2023թ.-ի N1, N2-ի Ա, Բ պրակները նոր մշակված մոտեցմամբ ու ձևաչափով տեղադրված են Համալսարանի պաշտոնական կայքում և ներկայացված են ՀՀ ԲԿԳԿ՝ վերջինիս կողմից ընդունելի գիտական հրատարակությունների 2024թ.-ի ցուցակում ընդգրկվելու նպատակով:

Ստորև ներկայացված Աղյուսակ 27-ում բերված է ՇՊՀ Գիտական տեղեկագրում վերջին 5 տարիներին հոդված տպագրած հեղինակների քանակը.

Աղյուսակ 27

2019-2023թթ.-ին ՇՊՀ գիտական տեղեկագրում հոդված տպագրած հեղինակների քանակ

ՇՊՀ-ի հեղինակների քանակ	Այլ հեղինակների քանակ	Ընդհանուր հեղինակների քանակ
2019 N1, ՊՐԱԿ Ա		
15	15	30
	2019 N1, ՊՐԱԿ Բ	
10	6	16
Ընդամենը՝		
25	21	46
	2019 N2, ՊՐԱԿ Ա	
11	60	71
	2019 N2, ՊՐԱԿ Բ	
28	43	71
	Ընդամենը՝	
39	103	142
	Ընդամենը՝	
64	124	188
2020 N1, ՊՐԱԿ Ա		
8	17	25
	2020 N1, ՊՐԱԿ Բ	
20	11	31
Ընդամենը՝		
28	28	56
	2020 N2, ՊՐԱԿ Ա	
6	7	13
	2020 N2, ՊՐԱԿ Բ	
14	19	33
	Ընդամենը՝	
20	26	46
	Ընդամենը՝	
48	54	102
2021 N1, ՊՐԱԿ Ա		
9	8	17
	2021 N1, ՊՐԱԿ Բ	
27	20	47
Ընդամենը՝		
36	28	64
	2021 N2, ՊՐԱԿ Ա	
8	23	31
	2021 N2, ՊՐԱԿ Բ	
18	33	51
	Ընդամենը՝	
26	56	82

	Ընդամենը՝	
62	84	146
2022 N1, ՊՐԱԿ Ա		
6	36	42
	2022 N1, ՊՐԱԿ Բ	
14	5	19
Ընդամենը՝		
20	41	61
	2022 N2, ՊՐԱԿ Ա	
3	34	37
	2022 N2, ՊՐԱԿ Բ	
15	2	17
	Ընդամենը՝	
18	36	54
	Ընդամենը՝	
38	77	115
2023 N1, ՊՐԱԿ Ա		
7	6	13
	2023 N1, ՊՐԱԿ Բ	
16	10	26
Ընդամենը՝		
23	16	39
	2023 N2, ՊՐԱԿ Ա	
11	18	29
	2023 N2, ՊՐԱԿ Բ	
11	5	16
	Ընդամենը՝	
22	23	45
	Ընդամենը՝	
45	39	84



Ստորև ներկայացված Աղյուսակ 28-ում բերված է ՇՊՀ Գիտական տեղեկագրում վերջին 5 տարիներին տպագրած հոդվածների քանակը.

Աղյուսակ 28

2019-2023թթ.-ին ՇՊՀ գիտական տեղեկագրում տպագրված հոդվածների քանակ[8]

ՇՊՀ հեղինակների մասնակցությամբ հոդվածների քանակ	Միայն այլ հեղինակների մասնակցությամբ հոդվածների քանակ	Ընդհանուր հոդվածների քանակ
2019 N1, ՊՐԱԿ Ա		
11	2	13
2019 N1, ՊՐԱԿ Բ		
8	3	11
Ընդամենը՝		
19	5	24
2019 N2, ՊՐԱԿ Ա		
10	30	40
2019 N2, ՊՐԱԿ Բ		
23	37	60
Ընդամենը՝		
33	67	100
Ընդամենը՝		
52	72	124
2020 N1, ՊՐԱԿ Ա		
4	6	10
2020 N1, ՊՐԱԿ Բ		
16	9	25
Ընդամենը՝		
20	15	35
2020 N2, ՊՐԱԿ Ա		
4	6	10
2020 N2, ՊՐԱԿ Բ		
11	18	29
Ընդամենը՝		
15	24	39
Ընդամենը՝		
35	39	74
2021 N1, ՊՐԱԿ Ա		
5	8	13
2021 N1, ՊՐԱԿ Բ		
20	13	33
Ընդամենը՝		
25	21	46

[8] Եթե հոդվածը տրված է համահեղինակությամբ, ապա այն ներառված է «ՇՊՀ հեղինակների մասնակցությամբ հոդվածների քանակ» սյան տակ

2021 N2, ՊՐԱԿ Ա		
4	11	15
2021 N2, ՊՐԱԿ Բ		
14	26	40
Ընդամենը՝		
18	37	55
Ընդամենը՝		
43	58	101
2022 N1, ՊՐԱԿ Ա		
3	16	19
2022 N1, ՊՐԱԿ Բ		
13	1	14
Ընդամենը՝		
16	17	33
2022 N2, ՊՐԱԿ Ա		
3	13	16
2022 N2, ՊՐԱԿ Բ		
12	1	13
Ընդամենը՝		
15	14	29
Ընդամենը՝		
31	31	62
2023 N1, ՊՐԱԿ Ա		
3	3	6
2023 N1, ՊՐԱԿ Բ		
12	8	20
Ընդամենը՝		
15	11	26
2023 N2, ՊՐԱԿ Ա		
7	6	13
2023 N2, ՊՐԱԿ Բ		
8	5	13
Ընդամենը՝		
15	11	26
Ընդամենը՝		
30	22	52



Ստորև ներկայացված Աղյուսակ 29-ում բերված են ՇՊՀ Գիտական տեղեկագրի խմբագրման, սրբագրման, տեխնիկական խմբագրման, տպագրության համար ծախսված գումարները վերջին 5 տարիների կտրվածքով.

Աղյուսակ 29

ՇՊՀ գիտական տեղեկագրի խմբագրման, սրբագրման, տեխնիկական խմբագրման, տպագրության, DOI համարանիշի ստացման համար 2019-2023թթ.-ին հատկացված գումարներ

Խմբագրման, սրբագրման, տեխնիկական խմբագրման գումար (ՀՀ դրամ)/առանց հարկերի/	Տպագրության գումար (ՀՀ դրամ) /ներառյալ հարկերը/	DOI համարանիշի ստացման գումար (ՀՀ դրամ) /ներառյալ հարկերը/
2019 N1 ՊՐԱԿ Ա,Բ		
403.000	470.000	-
2019 N2 ՊՐԱԿ Ա,Բ		
520.250	960.000	-
2020 N1 ՊՐԱԿ Ա,Բ		
214.000	250.000	-
2020 N2 ՊՐԱԿ Ա,Բ		
211.250	255.000	-
2021 N1 ՊՐԱԿ Ա,Բ		
253.250	405.108	46.000
2021 N2 ՊՐԱԿ Ա,Բ		
253.000	629.880	55.000
2022 N1 ՊՐԱԿ Ա,Բ		
153.500	361.200	33.000
2022 N2 ՊՐԱԿ Ա,Բ		
171.500	316.800	29.000
2023 N1 ՊՐԱԿ Ա,Բ		
148.050	58.000	26.000
2023 N2 ՊՐԱԿ Ա,Բ		
174.250	-	26.000

Հարկ է նշել, որ խմբագրման, սրբագրման և տեխնիկական խմբագրման աշխատանքներն իրականացվում են Համալսարանի աշխատակիցների կողմից, իսկ 2023թ.-ից սկսած ՇՊՀ Գիտական տեղեկագրի յուրաքանչյուր համարի յուրաքանչյուր պրակից, ըստ ՀՀ ԲԿԳԿ պահանջի, տպագրվում է ընդամենը 10-ական օրինակ, ինչը էապես նվազեցրել է ծախսերը:

Ստորև ներկայացված Աղյուսակ 30-ում բերված են ՇՊՀ Գիտական տեղեկագրին ներկայացված, տպագրության չերաշխավորված և երաշխավորված հոդվածների քանակը վերջին 5 տարիների կտրվածքով.

Աղյուսակ 30

2019-2023թթ.-ին ՇՊՀ Գիտական տեղեկագրին ներկայացված, տպագրության չերաշխավորված և երաշխավորված հոդվածների քանակ

Տարի	ՇՊՀ Գիտական տեղեկագրին ներկայացրած հոդվածների քանակ	Տպագրության չերաշխավորված հոդվածների քանակ	Տպագրության երաշխավորված հոդվածների քանակ	Տպագրված հոդվածների հաշվեկշիռը %
2019	157	33	124	78,98
2020	91	17	74	81,3
2021	128	27	101	78,9
2022	86	24	62	72,09
2023	69	17	52	75,4

Խնդիրներ	Լուծումներ
Հոդվածների գրախոսման ընթացքում և հրատարակումից հետո գրագողության դեպքերի բացահայտում:	➢ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Գիտական տեղեկագրի հրատարակման ընթացակարգի՝ Կենտրոնիի կողմից 2023թ.-ին լրամշակված տարբերակում ավելացվել են նոր կետեր (4.4, 4.5), որոնք իրավասություն են տալիս տեղեկագրի խմբագրական խորհրդին որոշումներ կայացնել բացահայտված գրագողության դեպքերի առնչությամբ: ➢ Ռեկտորի N18.07.23/10 հանձնարարականի համաձայն՝ Կենտրոնի կողմից լրամշակվել և լիովին նոր խմբագրությամբ Գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացվել Համալսարանում գրագողության դեմ պայքարի հայեցակարգը, ինչպես նաև Համալսարանում ակադեմիական ազնվության քաղաքականությունը: Նշված իրավական ակտերի մոտեցումները ռեկտորի N06.11.23/04 հանձնարարականի համաձայն ներկայացվել են Կենտրոնի և Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի կողմից Համալսարանի աշխատակիցների և ուսանողների շրջանակում կազմակերպված տեղեկատվական-իրազեկման հանդիպման ընթացքում: ➢ Համալսարանը դիմել է ՀՀ ԲԿԳԿ առաջարկությամբ՝ ձևավորել ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում ընդգրկված պարբերականների միասնական բազա՝ հայալեզու գիտական աշխատանքների ինքնատիպությունն ստուգելու հնարավորությամբ:

3.6 ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ, ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՐԱԽՈՍՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՂՄԻՑ

Նախորդ տարիների համանմանությամբ, 2023 թ.-ի ընթացքում կազմակերպվել են ինչպես Համալսարանի աշխատակիցների, սովորողների կողմից ներկայացված աշխատությունների, այնպես էլ ՀՀ այլ բուհերից ստացված աշխատությունների, ատենախոսական աշխատանքների (որպես առաջատար կազմակերպություն) գրախոսման գործընթացները:

Մասնավորապես, Համալսարանի աշխատակիցների կամ սովորողների կողմից ներկայացված աշխատություններին կից պարտադիր պայման է եղել համապատասխան ամբիոնի նիստի քաղվածքի առկայությունը, որտեղ քննարկված է տվյալ աշխատությունը և առկա է ամբիոնի հստակ դիրքորոշումը՝ տվյալ աշխատանքը տպագրության երաշխավորել/չերաշխավորելու վերաբերյալ: Այնուհետև աշխատանքը գրախոսման է ուղարկվել 2 այլ բուհեր, որտեղից ստացված կարծիքները տրամադրվել են հեղինակներին՝ առանց գրախոսի տվյալների: Կարծիքներին համապատասխան փոփոխությունները աշխատությունում կատարելուց հետո դրանց վերջնական տարբերակները ներկայացվել են Համալսարանի Գիտական խորհրդին՝ տպագրության երաշխավորելու միջնորդությամբ:

ՀՀ այլ բուհերից ստացված աշխատությունները, ատենախոսական աշխատանքները, Համալսարանի ռեկտորի հանձնարարականի հիման վրա տրամադրվել են համապատասխան ամբիոնին՝ առաջիկա ամբիոնի նիստում այն քննարկելու և մասնագիտական կարծիք տրամադրելու խնդրանքով:

Ստորև ներկայացված Աղյուսակ 31-ում բերված են 2023թ.-ի ընթացքում Համալսարանի աշխատակիցների և սովորողների կողմից ներկայացված աշխատությունների գրախոսման արդյունքները և Գիտական խորհրդի որոշումները՝ աշխատությունները տպագրության երաշխավորել/չերաշխավորելու վերաբերյալ.

Աղյուսակ 31

2023թ.-ի ընթացքում Համալսարանի աշխատակիցների և սովորողների կողմից ներկայացված աշխատությունների գրախոսման արդյունքներ և Գիտական խորհրդի որոշումներ

N	Հեղինակ(ներ)	Ամբիոն	Աշխատանքի վերնագիր	Գրախոսման արդյունք	Գիտական խորհրդի որոշում
1	Մկրտչյան Ա. Փափազյան Հ. Հաջոյան Ռ.	Տնտեսագիտություն	«Մրցակցություն» ուսումնական ձեռնարկ	Երաշխավորվել է տպագրության՝ որոշակի դիտարկումներով հանդերձ	Աշխատանքի կարծիքին համապատասխան փոփոխված տարբերակը երաշխավորվել է տպագրության
2	Զաղոյան Ա.	Մանկավարժություն	Մանկավարժական խորհրդատվության մեթոդական համակարգը	Երաշխավորվել է տպագրության՝ որոշակի դիտարկումներով հանդերձ	Վերադարձվել է ամբիոն՝ ամբիոնի առաջիկա նիստին կրկնակի քննարկելու առաջարկությամբ
3	Յուզբաշյան Խ.	Մանկավարժություն (հայցորդ)	“Почти все об армянской национальной борьбе “Кох””	Երաշխավորվել է տպագրության՝ որոշակի դիտարկումներով հանդերձ	Աշխատանքի կարծիքին համապատասխան փոփոխված տարբերակը երաշխավորվել է տպագրության
4	Ներսիսյան Ա.	Աշխարհագրություն և սերվիս	Հոգևոր Էակ-Deus-Homo. Վերադարձ ապագա (Հայկական քաղաքակրթության կենսընթացը)	-	-

Ստորև ներկայացված Աղյուսակ 32-ում բերված են 2023թ.-ի ընթացքում ՀՀ այլ բուհերից ստացված ատենախոսական աշխատանքների վերաբերյալ Համալսարանի համապատասխան ամբիոնի կողմից տրված կարծիքները՝ որպես առաջատար կազմակերպություն.

Աղյուսակ 32

2023թ.-ի ընթացքում ՀՀ այլ բուհերից ստացված ատենախոսական աշխատանքների վերաբերյալ կարծիքներ

N	Ատենախոսական աշխատանքի հեղինակ	Ատենախոսական աշխատանքի վերնագիր	Ատենախոսական աշխատանքն ուղարկած ՀՀ բուհ	Գրախոսումն իրականացրած Համալսարանի ամբիոն	Գրախոսման արդյունք
1	Նարեկ Էլոյան	Տուրիստական պատրաստության մեթոդական առանձնահատկություն-ները հանրակրթական դպրոցում	Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպրոտի պետական ինստիտուտ	Սպորտ և արվեստ	Որոշ նկատառումն երով հանդերձ՝ կարծիքը դրական է
2	Մերի Արզումանյան	Հայաստանի ցամաքային փափկամարմինների բազմազանությունը և էկոլոգիան	ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կնտրոն	Կենսաբանություն և քիմիա	Որոշ նկատառումն երով հանդերձ՝ կարծիքը դրական է
3	Գայանե Մելքոնյան	Սնդիկով աղտոտման խնդիրը Հայաստանի Հանրապետության խոշոր քաղաքներում	Երևանի պետական համալսարան	Աշխարհագրություն և սերվիս	Որոշ նկատառումն երով հանդերձ՝ կարծիքը դրական է
4	Անահիտ Զարգարյան	Անգլերեն քերականության փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգը Իրանի ավագ դպրոցում	Երևանի պետական համալսարան	Անգլերեն լեզու և գրականություն Մանկավարժություն	Որոշ նկատառումն երով հանդերձ՝ կարծիքը դրական է
5	Տաթևիկ Ենոքյան	Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորումը մայրենիի դասերին	Հայկական պետական մանկավարժական համալսարան	Հայոց լեզու և գրականություն Մանկավարժություն	Որոշ նկատառումն երով հանդերձ՝ կարծիքը դրական է
6	Քրիստինե Մեժլումյան	Անգլերենի բժշկական ենթալեզվի ուսուցման հաղորդակցական ռազմավարությունները	Հայկական պետական մանկավարժական համալսարան	Անգլերեն լեզու և գրականություն	Որոշ նկատառումն երով հանդերձ՝ կարծիքը դրական է
7	Էլմիրա Վարդանյան	Տավուշի մարզի լանդշաֆտների արդի	Երևանի պետական	Աշխարհագրություն և սերվիս	Որոշ նկատառումն

		վիճակը և էկոլոգիական բարելավման ուղիները	համալսարան		երով հանդերձ՝ կարծիքը դրական է
8	Տաթևիկ Սլավիկի Մովսիսյան	ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման հիմնախնդիրների լուծման ուղիները կրթական բարեփոխումների համատեքստում	Երևանի պետական համալսարան	Մանկավարժություն	Որոշ նկատառումն երով հանդերձ՝ կարծիքը
9	Մերի Եսայան	Անգլերեն գիտական տեքստերի թարգմանության ուսուցման մեթոդիկան մասնագիտական կողմնորոշման դասընթացում	Հայկական պետական մանկավարժական համալսարան	Անգլերեն լեզու և գրականություն	Որոշ նկատառումն երով հանդերձ՝ կարծիքը
10	Նունե Մովսիսյանի	Ֆիզիկայի հիմնարար սկզբունքները և մեթոդները որպես ավագ դպրոցում սովորողների ստեղծագործական մտածողության զարգացման միջոց	Հայկական պետական մանկավարժական համալսարան	Մաթեմատիկա, ֆիզիկա և SS	Որոշ նկատառումն երով հանդերձ՝ կարծիքը

Խնդիրներ	Լուծումներ
Համալսարանում ուսումնամեթոդական, ուսումնագիտական, գիտամեթոդական աշխատանքների, մենագրությունների և նմանատիպ այլ աշխատությունների գրախոսման կազմակերպում՝ առանց գործընթացը կարգավորող իրավական ակտի առկայության:	Համալսարանում ուսումնամեթոդական, ուսումնագիտական, գիտամեթոդական աշխատանքների, մենագրությունների և նմանատիպ այլ աշխատությունների գրախոսման կազմակերպման գործընթացն առավել համակարգված դարձնելու, հընթացս առաջացող հարցերին փաստաթղթավորված լուծում տալու նպատակով Կենտրոնի կողմից 2023թ.-ի սեպտեմբերին մշակվել է աշխատությունների գրախոսման գործընթացը կարգավորող ընթացակարգի աշխատանքային տարբերակը:

3.7 ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՆՑԱԾ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

2022-2023 ուստարվա ընթացքում Համալսարանի աշխատակիցների անցած վերապատրաստումներն ամփոփված են Աղյուսակ 33-ում:

Աղյուսակ 33

Աշխատակիցների՝ 2022-2023 ուստարում անցած վերապատրաստումների վերլուծությունն ըստ ստորաբաժանումների

Ստորաբաժանում	Անցած վերապատրաստումների թիվ, որից		Աշխատակիցների թիվ (31.08.2023թ. դրությամբ)	Անցած վերապատրաստում-ների թիվ / Աշխատակիցների թիվ
	Մասնագիտ.	Ոչ մասնագիտ.		
Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ				
Մաթեմատիկա, ֆիզիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ	9		26	5
	1	8		
Աշխարհագրություն և սերվիս	14		14	11
	-	14		
Կենսաբանություն և քիմիա	25		20	16
	8	17		
Տնտեսագիտություն	-		17	-
	-	-		
Ընդամենը	**48**		**77**	**32**
	9	**39**		
Հասարակական գիտությունների ֆակուլտետ				
Մանկավարժություն	12		26	10
	1	11		
Հոգեբանություն և սոցիոլոգիա	32		26	9
	11	21		
Սպորտ և արվեստ	2		24	2
	-	2		
Ընդամենը	**46**		**76**	**21**
	12	**34**		
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ				
Հայոց լեզու և գրականություն	9		21	7
	-	9		
Օտար լեզուներ և գրականություն	12		31	7
	5	7		
Պատմություն և իրավագիտություն	3		22	1
	2	1		
Ընդամենը	**24**		**74**	**15**
	7	**17**		

Համահամալսարանական ամբիոններ				
Ռազմական	7		7	7
	-	7		
Վարչական ստորաբաժանումներ				
Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոն	-		5	-
	-	-		
Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոն	-		2	-
	-	-		
Արտաքին համագործակցության կենտրոն	-		3	-
	-	-		
Որակի ապահովման բաժին	-		2	-
	-	-		
Մինչբուհական կրթության կազմակերպման բաժին	-		13	-
	-	-		
Մարդկային ռեսուրսների կառավարման, փաստաթղթաշրջանառության և իրավական ապահովման բաժին	-		6	-
	-	-		
Ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության բաժին	-		2	-
	-	-		
Ֆինանսական ռեսուրսների կառավարման և հաշվառման բաժին	-		6	-
	-	-		
Տնտեսական գործունեության և ենթակառուցվածքների սպասարկման բաժին	-		4	-
	-	-		
Գրադարան	-		5	-
	-	-		
Ընդամենը	-		**48**	-
	-	-		
Ընդամենը՝	**125**		**282**	**75**
	28	**97**		

2020-2023թթ.-ին Համալսարանի աշխատակիցների անցած վերապատրաստումներն ամփոփված են Գծապատկեր 13-ում:

Գծապատկեր 13

Աշխատակիցների 2019-2020 -2022-2023 ուստարիներին անցած վերապատրաստումների վերլուծություն



Պետք է նշել, որ վերոնշյալ ցուցանիշները բարելավելու ուղղությամբ Համալսարանի ղեկավարության կողմից 2022-2023 ուստարում ձեռնարկվել են կոնկրետ քայլեր: Մասնավորապես,

- «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամի կողմից Համալսարանում 2022թ.-ի նոյեմբերի 25-27-ը անցկացվեց «Մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման մեխանիզները» խորագրով վերապատրաստումը:
- Համալսարանի Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի կողմից 2023թ.-ի հունիսի 5-9-ը անցկացվեց «ՄԿԾ-ների բարելավում. մեխանիզմներ և գործիքակազմ» խորագրով վերապատրաստումը: Վերոնշյալ վերապատրաստումից հետո մասնակիցների շրջանում Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի կողմից անցկացված հարցման արդյունքում ստացված վերլուծությունների հիման վրա Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի և Մանկավարժության ամբիոնի կողմից 2023թ.-ի հունիսի 19-20-ը կազմակերպվեցին և անցկացվեցին վերապատրաստումներ հետևյալ թեմաների շրջանակում.
  - ✓ Դասընթացի վերջնարդյունքներին միտված գնահատման մեթոդներ,
  - ✓ Դասընթացի վերջնարդյունքներին միտված ուսումնառության և դասավանդման մեթոդներ:

Ստորև ներկայացված Աղյուսակ 34-ում բերված են 2022-2023 ուստարում Համալսարանի նախաձեռնությամբ իրականացված վերապատրաստումների վերաբերյալ որոշ մանրամասներ:

Աղյուսակ 34

2022-2023թթ.-ին Համալսարանի նախաձեռնությամբ իրականացված վերապատրաստումների տվյալներ

N	Վերապատրաստման խորագիր	Վերապատրաստող կառույց	Վերապատրաստման ժամանակահատված
1	Մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման մեխանիզմները	Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն	2022թ.-ի նոյեմբերի 25-27
2	ՄԿԾ-ների բարելավում. մեխանիզմներ և գործիքակազմ	Համալսարանի Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոն	2023թ.-ի հունիսի 5-9
	Դասընթացի վերջնարդյունքներին միտված գնահատման մեթոդներ: Դասընթացի վերջնարդյունքներին միտված ուսումնառության և դասավանդման մեթոդներ	Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոն, Մանկավարժության ամբիոն	2023թ.-ի հունիսի 19-20

Խնդիրներ	Լուծումներ
Վերապատրաստում անցած աշխատակիցներիի ոչ բավարար ցուցանիշ:	Համալսարանի աշխատակիցների շրջանում մասնագիտական, ինչպես նաև ոչ մասնագիտական վերապատրաստումների կազմակերպման գործընթացն առավել նպատակային, համակարգված դարձնելու նպատակով անհրաժեշտ է բարելավել վերապատրաստումների կազմակերպման առկա ընթացակարգը՝ ներմուծելով առավել արդյունավետ մեխանիզմներ: Որպես նման մեխանիզմ կարող են հանդիսանալ ՊԴ կազմի շրջանում իրականացվող դասալսումները, ինչպես նաև Որակի ապահովման բաժնի կողմից ուսանողների շրջանում անցկացվող հարցումները՝ կապված ՊԴ կազմի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների հետ:

3.8 ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ 2022-2023 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

Սկսած 2017-2018 ուստարվանից Համալսարանում համակարգված ձևով ամբիոնների կողմից և Կենտրոնի համակարգմամբ իրականացվում են գիտական սեմինարներ՝ ըստ նախապես կազմված ժամանակացույցի: Ժամանակացույցը և իրականացված գիտական սեմինարների լուսաբանումները տեղադրված են Համալսարանի պաշտոնական կայքում՝ Կենտրոնի ընտրացանկի Գիտաժողովներ և գիտական սեմինարներ բաժնի Ներհամալսարանական գիտական սեմինարներ ենթաբաժնում:

2022-2023 ուստարում Կենտրոնի կողմից ևս համակարգվել է ամբիոններում իրականացվող գիտական սեմինարների իրականացումը: Ստորև ներկայացված Աղյուսակ 35-ում բերված է 2022-2023 ուստարում ամբիոնների կողմից նախատեսված և իրականացված գիտական սեմինարների վերաբերյալ որոշակի տեղեկատվություն:

Աղյուսակ 35

2022-2023 ուստարում ամբիոնների կողմից նախատեսված և իրականացված գիտական սեմինարներ

N	Ամբիոն	Նախատեսված գիտական սեմինարների քանակ	Իրականացված գիտական սեմինարների քանակ	Իրականացված գիտական սեմինարների խորագրեր	Գիտական սեմինարի բանախոս
1	Մաթեմատիկա, ֆիզիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ	4	0	-	-
2	Աշխարհագրություն և սերվիս	3	3	1.Ժամանակակից քաղաքակրթության ճգնաժամի էությունը:Հայկական քաղաքա:կրթության հայտ 2.Շիրակի և Լոռու մարզերի բնակչության վերարտադրության համեմատական վերլուծության փորձ: 3. Զբոսաշրջությունը որպես տնտեսության ճյուղ. Զբոսապրանքի արտադրության առանձնահատկությունները	1.Ներսիսյան Արմեն 2.Բոյաջյան Արտաշես 3.Թադևոսյան Գագիկ
3	Կենսաբանություն և քիմիա	4	5	1.Միջավայրի դերի գնահատումը Լուիս Քերոլի «Ալիսը հրաշքների աշխարհում» և «Ալիսը հայելու աշխարհում» հեքիաթներում: 2.Կենսատեխնոլոգիաների կիրառումը գյուղատնտեսական բնագավառում: 3. Ռադիոակտիվ ճառագայթում- բարեկամ և թշնամի 4. Հացազգի մշակաբույսերի գենետիկական բազմազանությունը և հնարավոր կիրառությունը սելեկցիայում 5. Կենդանիների կարմիր գրքում գրանցված երեք վտանգված տեսակների՝ փոքրասիական գետնասկյուռի (Spermophilus	1.Ադամյան Նելլի 2. Հարությունյան Արա 3.Պետրոսյան Կարինե 4.Սուվարյան Լուսինե 5.Գրիգորյան Անգին

				xanthoprymnus), խայտաքիսի (Vormela peregusna) և փոքրասիական մողեսի (Parvilacerta parva) ուսումնասիրությունն ու պահպանությունը	
4	Տնտեսագիտություն	0	0	-	-
5	Հայոց լեզու և գրականություն	3	3	1. Ֆրիկյան առեղծվածը 2. Մաղիազրագիտություն 3. Արդի հայ պոեզիա	1.Հայրապետյան Աստղիկ 2.Արևշատյան Նունե 3.Մանասյան Լուսինե
6	Օտար լեզուներ և գրականություն	6	1	Ինչպես տեսական առարկան դարձնել գործնական:	Իսահակյան Հեղինե
7	Պատմություն և իրավագիտություն	4	3	1.Պատմագիտության արդի մոտեցումները 2. Տեղեկատվական պատերազմների կարգավորման հիմնախնդիրները միջազգային իրավունքում 3. Հայաստանի ՀԿ սեկտորը. պատմություն և իրողություններ	1.Նիկողոսյան Արթուր 2.Հովհաննիսյան Արտակ 3.Ասոյան Լիլիթ
8	Մանկավարժություն	0	0	-	-
9	Հոգեբանություն և սոցիոլոգիա	8	0	-	-
10	Արվեստ և սպորտ	3	0	-	-
11	Ռազմական	-	-	-	-
	Ընդամենը	**35**	**15**		

Ստորև ներկայացված Գծապատկեր 14-ում բերված է 2020-2021 ուստարվանից 2022-2023 ուստարում ամբիոնների կողմից Համալսարանում նախատեսված և իրականացված գիտական սեմինարների քանակը:

Գծապատկեր 14

2020-2021 ուստրավանից 2022-2023 ուստարում ամբիոնների կողմից Համալսարանում նախատեսված և իրականացված գիտական սեմինարների քանակ



Խնդիրներ	Լուծումներ
Նախատեսված և իրականացված գիտական սեմինարների քանակի մեծ տարբերություն:	Համալսարանի աշխատակիցներին և ուսանողներին գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների ուղղությամբ ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգում, Համալսարանի աշխատակիցներին և ուսանողներին գիտահետազոտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգում, Համալսարանի աշխատակիցների և ուսումնառողների կողմից իրականացվող գիտահետազոտական գործունեության համար լրավճարի տրամադրման կարգում ներդրվել են մեխանիզմներ, որոնք խթան կլինեն աշխատակիցներին՝ իրենց գիտահետազոտական գործունեության արդյունքները ամբիոնների կողմից կազմակերպվող գիտական սեմինարներին ներկայացնելու համար: Վերոնշյալ մեխանիզմներն են. ➢ Գիտահետազոտական գործունեության համար տրաադրվող ներբուհական դրամաշնորհների թեմայի շրջանակում իրականացված հետազոտության արդյունքները մինչև թեմայի ավարտը պետք է ամփոփվեն առնվազն 30 էջ (A4 ձևաչափի) ծավալով գիտամեթոդական/ ուսումնագիտական/ ուսումնամեթոդական աշխատանքում, որը պետք է ներկայացված լինի մասնագիտական ամբիոնի կողմից նախատեսված գիտական սեմինարների ընթացքում պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում, ➢ Ամբիոնում առնվազն 2 գիտական սեմինարի անցկացման համար տրամադրվում է 10.000 դրամ լրավճար: